Azg Ազգ

16 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 206(4824)

ISSN: 1829-1651

Զրպարտության եւ վիրավորանքի մասին հոդվածները՝ սահմանադրական

Սահմանադրական դատարանի որոշմամբ քաղաքացիական օրենսգրքի զրպարտության եւ վիրավորանքի մասին հոդվածները համապատասխանում են սահմանադրությանը: Սա ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանի որոշումն է, որն ի չիք դարձրեց մի շարք լրատվամիջոցների հույսերը՝ ազատվել դատական գործընթացներից եւ միլիոնների հասնող փոխհատուցումներից:

Մարդու իրավունքների պաշտպան **Կարեն Անդրեասյանի** ներկայացմամբ՝ վիճարկվող հոդվածի մի շարք հասկացություններ անորոշ են, այդ թվում՝ վիրավորանք, զրպարտություն, ստույգ փաստ, ողջամտության սահմանները: Սակայն ամենալուրջ խնդիրը փոխհատուցման առավելագույն չափի անորոշությունն է: «Համապատասխան դրույթների անորոշությունն ու փոխհատուցման սահմանման հստակ չափանիշների բացակայությունը իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել են արտահայտվելու ազատ իրավունքի անհամաչափ սահմանափակմանը՝ վտանգելով որոշ լրատվամիջոցների հետագա գործունեությունը»: Որպես պատասխանող դատարանում ներկայացված էր Ազգային ժողովը: Աժ ներկայացուցիչ **Անի Մխիթարյանը** հակադարձեց պաշտպանին՝ նշելով, որ հոդվածները սահմանադրական են, լրագրողներն էլ պարտավոր են հարգել անձի արժանապատվությունը: ՍԴ-ն մերժեց ՄԻՊ-ի հայցը քաղաքացիական օրենսգրքից համապատասխան հոդվածը քաղաքացիական օրենսգիրք տեղափոխելու մասով: Ինչ վերաբերում է փոխհատուցման գումարին, ՍԴ-ն դատարաններին հորդորեց ավելի համեստ գումարներ սահմանել:

Հ. Հ.

Ամերիկահայերի կոչը Քլինթոնին՝ խախտելու Զարաֆոլուի առնչությամբ լռությունը

Ամերիկայի Հայ դատի գրասենյակը կոչ է արել ամերկահայերին դիմելու ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնին՝ Ռագըփ Զարաֆոլուի կալանավորման դեմ բողոքելու կոչով:

«**Ազգը**» տեղեկացրել է, որ հոկտեմբերի 28-ին Սամբուլում 47 մտավորականների թվում ձերբակալվել էր նաեւ Ռագըփ Զարաֆոլուն, նոյեմբերի 2-ին ձերբակալվածներից 44-ին կալանավորեցին: Մինչ այդ՝ հոկտեմբերի 2-ին 96 թուրք եւ քուրդ մտավորականների հետ ձերբակալվել, ապա եւ կալանվել էր նրա որդին՝ Դենիզ Զարաֆոլուն, ընդ որում՝ Թուրքիայի ազգային մեծ ժողովում 26 պատգամավորով ներկայացված «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության քաղաքագիտության ակադեմիայում «քաղաքականության փիլիսոփայություն» դասավանդելու համար:

Հայ հասարակությանը քաջ հայտնի թուրք մտավորական Ռագըփ Զարաֆոլուն կալանավորվել է PKK-ի քաղաքային թեւը հանդիսացող Քուրդիստանի բազմությունների միության՝ KCK-ի գործով: Այդ գործը գրավել է նաեւ ԱՄՆ պետքարտուղարության ուշադրությունը, որն էլ, ի դեմս խոսնակ Վիկտորիա Նյուլանդի, հանդես է եկել հայտարարությամբ: Նոյեմբերի 3-ին, ի պատասխան KCK-ի գործով կալանված թուրք եւ քուրդ մտավորականների մասին գրավոր հարցադրման, Նյուլանդն ասել է, որ Մ. Նահանգները ոչ միայն Թուրքիայում, այլեւ աշխարհի բոլոր երկրներում պաշտպան է կանգնում խոսքի ազատությանը:

Հայ դատի գրասենյակի հաղորդագրության համաձայն, ամերիկահայերը միանում են բոլոր այն կոչերին, որ ուղղված են ԱՄՆ պետքարտուղարին՝ վերջ դնելու Զարաֆոլուի կալանավորման առնչությամբ պահպանվող մոտ երկշաբաթյա լռությանը: Գրասենյակը ամերիկահայերին կոչ է անում իր կայքէջի հատուկ բաժնում միանալ Քլինթոնին ուղղված կոչին:

Ա. Հ.

Լուժկովին կանչել են հարցաքննության

Մոսկվայի նախկին քաղաքապետ Յուրի Լուժկովին երեկ հարցաքննության են կանչել ՆԳՆ քննչական վարչություն: ՌԻԱ գործակալությունը նշում է, որ նրան հարցաքննել են որպես վկայի «Մոսկվայի բանկից» 12,5 մլրդ ռուբլու հափշտակման գործով:

Լուժկովը ներկայացել է հարցաքննությանը, չնայած բարեկամները փորձել են տարհամոզել նրան: «Ես հասկանում եմ բոլոր հնարավոր հետեւանքները, բայց այլ կերպ վարվել չեմ կարող: Ես ազնիվ եմ աշխատել եւ կարող եմ հանգիստ խղճով պատասխանել բոլոր հարցերին», ասել է նա լրագրողներին:

Այդուհանդերձ նախկին քաղաքապետը իր կնոջը՝ Ելենա Բատուրինային արգելել է Մեծ Բրիտանիայից վերադառնալ Ռուսաստան, «քանի որ ոչ մի երաշխիք չկա, թե նա կկարողանա վերադառնալ Լոնդոն՝ զավակների մոտ»:

Բյուջեն, նվազագույն աշխատավարձը եւ Աժ ճաշարանը...

Աժ ճաշարանը հրաժարականից հետո

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հովիկ Աբրահամյանի հրաժարականն անմիջապես իր անդրադարձն էր ունեցել Ազգային ժողովի ճաշարանում: Երեկ այնտեղ պակասել էր տեսականին: Սա լրագրողները տրամաբանական համարեցին, քանի որ Աժ հեղինակությունը բարձրացնելու ճանապարհին Աժ նախագահը կարգ ու կանոն էր մտցրել այստեղ՝ ապահովելով համեմատաբար ցածր գներով եւ բարձր որակով ուտեստեղենով: Երեւում է՝ հրաժարականի ընդունումից հետո Աժ ճաշարանում ճաշերը եւս հրաժարական են տալու, առնվազն մաչելի գներից:

Բյուջեն՝ լիագումարում

Նախորդ Աժ հանձնաժողովներում շուռումուռ տրված բյուջեն երեկ ներկայացվեց Ազգային ժողովի նիստում: Այդ առթիվ վարչապետ **Տիգրան Սարգսյանի** խոսքում նոր պահ կար՝ նա արդյունաբերողների եւ գործարարների միության համագումարում նախագահի ծրագրային ելույթին հղում արեց, որտեղ հիմնական թիրախներ էին ֆիքսվել կառավարության համար: Վարչապետը նախագահի խոսքից այն մեջբերումն արեց, որտեղ ասվում է , թե մենք տնտեսական աճի եւ զարգացման խնդիր ունենք, եւ տնտեսական զարգացումն այսօր ազգային անվտանգության նշանակություն ունի: Վարչապետը նշեց այդպիսի զարգացման ապահովման 2012-ի ուղղությունները:

Բնականաբար նա կրկին խոսեց բյուջեի դեֆիցիտը 3 տոկոսով կրճատելու մասին (հասցվելու է 3 տոկոսի), հարկային մուտքերը 101 միլիարդ դրամով ավելացնելու, ռիսկերը կառավարելու մասին. «2012-ին, երբ արդեն նոմինալ ՀՆԱ-ի ցուցանիշը շատ ավելի բարձր կլինի, քան 2007-2008 թվականներին, ի վիճակի կլինենք այս ցուցանիշը կատարել: Այս ցուցանիշի կատարմանն է միտված լինելու նաեւ ձեզ ներկայացված հարկային փաթեթը», ասաց վարչապետը: Իսկ հարկային փաթեթի քննարկված մասն, ի դեպ, բավական քննադատվեց Ազգային ժողովում: Վարչապետն ի մի բերեց բյուջեի հավասարակշռման խնդիր լուծող հարկային փաթեթի տրամաբանությունը. «Առաջին հերթին բարձր եկամուտներ ունեցողները պետք է ավելի շատ հարկեր վճարեն, քան ավելի ցածր եկամուտներ ունեցողները, հարկերի հավասարման պրոգրեսիվ սանդղակի ներդրումը եկամտահարկի մասով հետապնդում է այդ նպատակը: Այն արտոնությունները, որ այդ փաթեթով տրամադրում ենք փոքր ու միջին բիզնեսին, հետապնդում է այդ նպատակը: Այն բեռը, որ մենք դնում ենք շռայլության հարկի ձեւով, առաջին հերթին վերաբերում է հասարակության այն խավին, որն ունի բավարար եկամուտներ՝ նման ծախսեր իրականացնելու համար»: Բյուջեում աշխատավարձերի բարձրացում չի նախատեսվում, ինչը հատկապես քննադատում է խորհրդարանական ընդդիմությունը, սակայն կառավարությունը փորձել է սոցիալական խնդիրները լուծել, այնուամենայնիվ, վարչապետի խոսքով. «2012-ին վերաբաշխելով պետության եկամուտները հարուստներից դեպի աղքատներ՝ 10 տոկոսով ավելացնելու ենք 100 հազար ընտանիքների սոցիալական նպաստները: Սա վերաբերում է մեր ընտանիքների մեկ յոթերորդին:

Տես էջ 2

Սիլվա Համբարձումյանի դեպքո՞վ են «Լիսկայի» հարցերը լուծում

Դատելով հատուկ քննչական ծառայության արագ արձագանքից, որը երեկ տեղեկացրեց, թե քրեական գործ է հարուցվել «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում նոյեմբերի 14-ի երեկոյան տեղի ունեցած դեպքի կապակցությամբ (Սյունիքի մարզպետը ծեծի է ենթարկել գործարար Սիլվա Համբարձումյանին), կարելի է հետեւություններ անել, որ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հարցը վաղուց էր հասունացել, ուղղակի պատկերավոր ասած՝ «Ֆրանց Ֆերդինանդի սպանությունն» էր դրան պակասում: Մի խոսքով՝ գործարար Սիլվա Համբարձումյանին ծեծի ենթարկելու փաստն էլ հենց առիթ կդառնա գուցե «Լիսկայի» հարցերը լուծելու համար, ինչը մարզպետը, նույն ինքը «Լիսկան» (ճիշտը «Լիցկա» է), դժվար թե ընբռներ, այլապես իրեն այդպես անսանձ չէր պահի: Այսպես, երեկ ՀՔԾ-ն քրգործ է հարուցել Սիլվա Համբարձումյանի գրավոր հաղորդման հիման վրա նոյեմբերի 14-ի միջադեպի առիթով: Համբարձումյանը երեկ առավոտից ՀՔԾ էր հրավիրվել: Ըստ ՀՔԾ հաղորդագրության՝ Սիլվա Համբարձումյանին առաջարկվել է դատաբժշկի ուղեգիր, սակայն նա հրաժարվել է փորձաքննության ենթարկվել, քանի որ ցավեր ունեցել է մարզպետի հարվածներից, բայց մարմնական վնասվածքներ՝ ոչ: Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն: Հաղորդագրության մեջ նշված է նաեւ, որ Սիլվա Համբարձումյանը հատուկ քննչական ծառայություն էր հրավիրվել դեռ նոյեմբերի 10-ի մամուլի ասուլիսի վերաբերյալ հրապարակումների հիման վրա նախապատրաստվող նյութերի շրջանակներում, քանի որ նրա կողմից մեղադրանք է հնչել Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանին՝ 102 մլն դրամի սարքավորումների յուրացման վերաբերյալ:

Երեկ ավելի ուշ մարզպետ Ա. Խաչատրյանը հերքել է Ս. Համբարձումյանի ծեծի ենթարկված լինելը:

Մ. Խ.

Արաբական լիգան, ընդառաջելով ԱՄՆ-ին, կասեցնում է Սիրիայի անդամակցությունը

Իսկ Թուրքիան պաշտոնապես ներողություն է պահանջում նախագահ Ասադի վարչակարգից

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Նոյեմբերի 12-ին Արաբական լիգան որոշեց կասեցնել Սիրիայի անդամակցությունը: Քաթարի առաջարկով ընդունված այս որոշմանը առարկել է Իրանը, իսկ Ալժիրը, ի գիտություն լիգայի անդամ երկրների, հրաժարվել է Սիրիայից հետ կանչել իր դեսպանին: Ըստ երեւույթին, որոշումը վետոյի է ենթարկել Լիբանանը, որ Ռաֆիկ Հարիրին անընդունելի է համարել այդ վետոն, իսկ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման՝ ակնկալիքներից ավելի արմատական:

Նախագահ Օբամայի այս հայտարարությունը ցույց է տալիս, որ Սիրիայի անդամակցությունը կասեցնելու որոշումն ընդունելիս Արաբական լիգան առաջնորդվել է պատշտոնական Վաշինգտոնի հորդորներով: Այսինքն՝ Վաշինգտոնը որոշումից անչափ գոհ է:

Հակառակ դրան, սաստիկ զայրացած են Սիրիայի նախագահ Բաշար Ասադի գլխավորած իշխանություններն ու ժողովուրդը: Այս զայրույթն արտահայտվել է Դամասկոսում, Հալեպում եւ Լաթաքիայում Քաթարի, Սաուդյան Արաբիայի, Ֆրանսիայի եւ Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչությունների վրա հենց նոյեմբերի 12-ի երեկոյան կատարված հարձակումներով:

Թեեւ Թուրքիան Լիգայի անդամ չէ, այսինքն՝ Սիրիայի անդամակցության կասեցման որոշման հետ գոնե անմիջական առնչություն չունի, սակայն զինում է սիրիական ընդդիմությանը, փորձում է հասնել իր իսկ նախաձեռնությամբ Սամբուլում ձեւավորված Սիրիայի ազգային խորհրդի միջազգայնորեն ճանաչմանը, կազմավորել է Սիրիայի այսպես կոչված ազատ բանակը, տեղակայել սիրիական սահմանի մոտակայքում, որպեսզի այս «բանակի» գրոհայիները ներթափանցեն եւ դիվերսիոն գործողություններ իրականացնեն սեփական հայրենիքում:

Ավելին, Ռուսաստանի եւ Չինաստանի վետոյով Սիրիայի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման ձախողումից հետո Թուրքիան ձեռնամուխ է եղել ինքնուրույն պատժամիջոցներ կիրառել այս երկրի դեմ: Թերեւս Սիրիայի նկատմամբ ակնհայտ թշնամական այս դրսեւորումների պատճառով է, որ Դամասկոսում, Հալեպում եւ Լաթաքիայում տեղի ունեցած հարձակումներն առավել կատաղի բնույթ են ստացել Թուրքիայի դեսպանատան եւ հյուպատոսարանների պարագայում:

Տես էջ 5

ԱԶԳ **Ընթացիկ**

ՕԵԿ-ի հանդիպումները Լոռու մարզում

«Օրինաց երկիր» կուսակցության հերթական հանրային հաշվետվությունը Լոռվա մարզի Սպիտակ, Ստեփանավան եւ Վանաձոր քաղաքներում էր: Երեք քաղաքներում էլ կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանին եւ նրա թիմակիցներին դիմավորեցին աղ ու հացով: Լեփ-լեցուն դահլիճում, ջերմ ու անմիջական մթնոլորտում կայացած քննարկումները վերաբերում էին ինչպես սոցիալ-տնտեսական խնդիրներին, այնպես էլ Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերի լայն շրջանակներին:

Արթուր Բաղդասարյանը հանրությանը հորդորեց առաջնորդվել ոչ թե պասիվ կրավորական դիրքորոշմամբ, այլ ակտիվ նախաձեռնողական քաղաքականությամբ.

ՕԵԿ-ի առաջնորդը, կարեւորելով հասարակության հետ ակտիվ շփումներն ու հանդիպումները, նշեց, որ քանամյա անկախ Հայաստանի պատմության մեջ ՕԵԿ-ը 15 տարեկան է, եւ այդ 15 տարիների ընթացքում, շրջելով Հայաստանի գյուղերով, քաղաքներով, լսում է մարդկանց հուզող խնդիրները, առաջարկները, հոգսերն ու մտահոգությունները, ներկայացնում հաշվետվություն՝ ՕԵԿ կատարած աշխատանքների, առաջիկա ծրագրերի մասին, եւ ՕԵԿ-ն իր ամենօրյա հետեւողական, պատասխանատու աշխատանքով եւ հնարավորությունների ներածին չափով փորձում է դրանք կյանքի կոչել եւ դարձնել իրականություն:

ՕԵԿ-ի թիկունքում վիթխարի աշխատանք կա կատարված, որոնք իրականություն են դարձել ավելի քան 200 օրենքի տեքստ՝ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից մինչեւ մշակութային, գենդերային եւ երիտասարդության հարցեր: Ամենատարբեր ոլորտներում տարբեր ուղղություններով իրականացվող բարեփոխումներ, որոնց հիմքում ընկած է երկրում դրական, լուսավոր փոփոխություններ իրականացնելու հրամայականը:

Անդրադառնալով Սպիտակի, Ստեփանավանի եւ Վանաձորի ներկայիս տնտեսության եւ արդյունաբերության անմխիթար վիճակին՝ նշեց, որ պետությունը տնտեսության՝ հատկապես արդյունաբերության զարգացման գործում պետք է առավել ակտիվ եւ «ագրեսիվ» քաղաքականություն վարի: ՕԵԿ-ն իշխանության մեջ ունեցած իր ներգրավվածությամբ նպաստում է դրա իրականացմանը, դեռեւս 2008-ին Արթուր Բաղդասարյանի եւ երկրի նախագահ Սերժ Սարգսյանի միջեւ ստորագրված կոալիցիոն հուշագրի չորրորդ կետով մինչեւ 2013-ը պետք է վերանա աղետի գոտի հասկացությունը: Դրա վառ ապացույցը այսօրվա Գյումրիում իրականացվող լայնածավալ շինարարությունն է:

Որպես քաղաքական կառույց՝ ՕԵԿ-ն իր նախընտրական ծրագրերում եւս մշտապես նշել է, որ Հայաստանը միայն Երեւանը չէ, եւ ամեն համայնք պետք է ունենա իր «անձնագիրը», որտեղ հստակ նշված լինեն տվյալ համայնքի առանձնահատկություններն ու լուծում պահանջող առաջնահերթ խնդիրները:

Հայաստանում այսօր կա 180 հազար հաշմանդամ, մտահոգության լուրջ առարկա է նաեւ հաշմանդամների հարցը, կարեւորելով նրանց հիմնախնդիրները՝ Արթուր Բաղդասարյանը նշեց, որ ՕԵԿ-ի նախաձեռնությամբ առաջիկայում Հայաստանում կբացվի «Հաշմանդամների պաշտպանության ազգային կենտրոն»:

Դիմելով ներկաներին՝ Արթուր Բաղդասարյանն ասաց, որ ներկայիս տեղեկատվական հասարակության պայմաններում պետությունը պետք է առավել համակարգված, նպատակաուղղված գործունեություն ծավալի, եւ այս համատեքստում «Օրինաց երկիր» կուսակցությունը գտնում է, որ սանդարս քայլերով առաջ չեն գնում, այլ պետք են նորարարական, ինովացիոն գաղափարներ, պետք է ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը եւ կարողանալ ճիշտ լուծումներ եւ ելքեր առաջարկել: Արթուր Բաղդասարյանի համոզմամբ՝ պետք է անցնել ոչ թե իրավիճակային, այլ ծրագրված պետական քաղաքականության եւ լուծումների բոլոր ոլորտներում:

Հայկական գամփռ հովվաշունը՝ հայկական բրենդ

Երեկ «Նովոստի» մամուլի ակումբը առաջին անգամ հյուրընկալեց հայկական գամփռ ցեղատեսակի հովվաշան՝ 1,4 տարեկան Վուլկանին եւ 40 օրական Ռուբին: Մոտ մեկ ժամ տեւած «Հայաստանի կինոլոգիական սպորտային միության» ասուլիսին աշխարհում առանձին ցեղատեսակ համարվող հայկական ծագումով գամփռները ավելի հանգիստ ու խելոք իրենց պահեցին, քան նրանցից սկզբում վախեցող, իսկ հետո մտերմացած լրագրողները: Մամուլի ակումբում կենդանի տեսնելը եզակի դեպք է, սակայն շատ ավելի կարեւոր է, որ ներկաները տեսնեին, թե ինչպիսի հասկացող, խելացի են սարերում ապրող հովվաշները: Ժամանակն է, որ գամփռ հայկական ցեղատեսակի բուծման, տարածման ու պահպանման համար կառավարական մոտեցում լինի: Թե չէ ի՞նչ է սացվում. 49 տարի առաջ Գասպարյանների գերդաստանը Նախիջեւանից գալիս է ու իր հետ բերում պապից պապ անցած գամփռ ցեղատեսակի շներին: Այսօր Գասպարյանների շնորհիվ, ինչպես պատմում էր կրտսեր **Վաղարշակ Գասպարյանը**, Սյունիքի մարզի Սիսիանի սարերում բազմացրել են 20 «գամփռ», որոնք հրաշալի հսկում են իրենց 2000 գլուխ ոչխարի հոտը գայլերից ու այլ գազաններից: Այդ չափազանց խելոք ու հավատարիմ շները ապրում են 15-18 տարի, տարեկան երկու անգամ սերունդ են տալիս՝ 1-13 ձագ, ու նրանց քաշը հասնում է մինչեւ 70 կգ: Վաղարշակի գամփռներից 4-ը մասնակցել են շների ցուցահանդեսին, իսկ Դաժանը գրավել է առաջին մրցանակը: Դեկտեմբերի 10-ին ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում անցկացվելու է շների աշխարհի առաջնություն, որին մասնակցելու են 13.000 շուն՝ աշխարհի տարբեր երկրներից: Չնայած ՀԿՍՄ-ն միջազգային ընկերության անդամ է, չունի այսօր այդ կարեւոր առաջնությանը գոնե երկու «գամփռ» ներկայացնելու հնարավորություն, մտահոգ պաստում էր կինոլոգիական միության նախագահ **Վիոլետա Գաբրիելյանը**:

Գամփռ հայկական հովվաշունը մեծ հետաքրքրություն է առաջացրել նախորդ երկու ցուցադրական մրցույթներում իր բացառիկ ունակություններով ու բացառիկ տեսակով: Անհրաժեշտ է լուրջ ու խելամիտ ձեւով մոտենալ հայկական այս ցեղատեսակին՝ որպես ազգային բրենդի, որպեսզի այս ցեղատեսակը չարժանանա վանականվի ճակատագրին ու չսեփականշնորհվի այլ ազգերի կողմից: Եթե ներկայիս գործող «Մխիթար» բուծարանին (տնօրեն՝ Վահան Մխիթարյան) կամ միությանը աջակցեն, ապա հայկական գամփռ հովվաշների բազմացումը, նաեւ փոխանակումը, համաշխարհային շուկայում ներկայացնելը, մեծ հեղինակություն կբերեն այդ ցեղատեսակին, որից Հայաստանում կա ընդամենը 24 հատ՝ զտարյուն:

Ահա այս եւ այլ խնդիրներից խոսեցին հյուրերը, որոնց թվում էր նաեւ անասնաբույժ **Կարո Պետրոսյանը**: Վերջինս տեղեկացրեց, որ նոյեմբերի 20-ին, ժամը 10-ին Շենգավիթի սպորտդպրոցի դահլիճում (Եղիշե Թադեւոսյան 21) կազմակերպվում է շների միջազգային ցուցահանդես, որին մասնակցելու համար հայտեր են սացվել 30 ցեղատեսակների շների տերերից, կազմակերպություններից՝ Վրաստանից, Բուլղարիայից, ՌԴ-ից, Լիտվայից, Լեհաստանից: Այդ յուրօրինակ «Շների գեղեցկության մրցույթին» մասնակցելու են նաեւ հայկական բրենդ հանդիսացող գամփռ ցեղատեսակի հովվաշները: Մուտքն ազատ է:

Ավելացնենք, որ Մոսկվայում կայանալիք աշխարհի առաջնությանը հարկ է, որ գամփռը ներկայացված լինի, եթե մեր պետությունը կամ էլ գործարարները, օլիգարխները օգնեն ֆինանսապես, այլ ոչ թե պարծենան, որ այս կամ այլ ցեղատեսակի շուն ունեն կամ էլ դրամ շահեն՝ շներին կռվեցնելով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԿԱՆԱԴԱ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի ավանդական տարեկան հանգանակության մեկնարկ

Նոյեմբերի 12-ին Մոնրեալում մեկնարկեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի ավանդական տարեկան հանգանակությունն ամերիկյան մայրցամաքում:

Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպանության հովանու ներքո կազմակերպված միջոցառմանը ներկա էին հայ համայնքային կառույցների ղեկավարները եւ խոշոր անհատ ձեռներեցները:

Ներկաներին մանրամասնորեն ներկայացվեցին տարիների ընթացքում իրականացված աշխատանքը, բազմաթիվ ընթացիկ ծրագրերը եւ դեռեւս չլուծված խնդիրները: Նշվեց, որ անցյալ տարվա հանգանակությամբ կառուցվել եւ վերանորոգվել են Արցախի ջրամատակարարման ցանցերը, հազարավոր մարդկանց խմելու եւ ոռոգման ջրի խնդիր է լուծվել: Այս տարվա հանգանակությունը նախորդի գաղափարի շարունակությունն է լինելու:

Կանադայում ՀՀ դեսպան Արմեն Եգանյանը երախտագիտություն հայտնեց ներկաներին եւ նշեց. «Ձեր բոլորի մասնակցությունը կարեւոր է որքան նյութական, նույնքան էլ բարոյական առումով: Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի համատեղ ջանքերով միայն հնարավոր կլինի հաղթահարել պատմության ներկա փուլում հայ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերներն ու անլուծելի թվացող խնդիրները»:

Բյուջեն, նվազագույն աշխատավարձը եւ ԱԺ ճաշարանը...

1-ին էջից

Ավելի քան 500 հազար թոշակառուների համար 10 տոկոսով ավելացնելու ենք թոշակները: Ավելի քան 120 հազար պետական ծառայողներ օգտվելու են այն սոցիալական փաթեթից, որ ներկայացրել ենք ձեզ: Այն, ըստ էության, նրանց համար կնշանակի եկամուտների ավելացում՝ 10 տոկոսով եկամուտների ավելացում: Այն առաջին հերթին թիրախավորում է ավելի ցածր եկամուտներ ունեցող պետական պաշտոնատար անձանց»:

Ի դեպ, երեկ բյուջեի քննարկումից առաջ ընդունվեցին հարկային փաթեթի մաս կազմող այն նախագծերը, որոնցով բարձր եկամուտներ ունեցող ֆիզիկական անձանցից (2 մլն դրամից ավելի) եկամտահարկ է գանձվելու առավել բարձր (պրոգրեսիվ) հարկման դրույքաչափերով, վերականգնվելու են անհատ ձեռներեցների կողմից եկամտահարկի ձեւով կատարվող կանխավճարների չափերը, 2 մլն դրամից բարձր աշխատավարձի համար առաջվա 3 տոկոսի փոխարեն սահմանվում է 8 տոկոս եկամտահարկ, թաքնված առնվազն 5 աշխատողներ պահելու համար ավելի վաղ սահմանված 60 հազար դրամ տուգանքը դառնում է 300 հազար դրամ, անձնական հաշվի քարտերի վարման՝ էլեկտրոնային եղանակով իրականացնելու համակարգի ներդրումն է ամրագրվում եւ այլն:

Բյուջեի քննարկումն այսօր կշարունակվի, հավանաբար այսօր խորհրդարանական ուժերն առավել կկենտրոնանան բյուջեի քննադատության վրա: Իսկ երեկ բյուջեի քննարկումն ընդհատվեց, քանի որ ՀՅԴ-ն ըստ կանոնակարգի արտահերթ օրենսդրական նախաձեռնություն էր օրակարգ մտցրել՝ քննարկվում էր. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին», «Եկամտահարկի մասին» օրենսդրական նախաձեռնությունը, որի նպատակը հիմնական զեկուցող Արծվիկ Մինասյանի խոսքով՝ Հայաստանում վարձատրության միասնական քաղաքականության ձեւավորումն է: Այդ նախաձեռնությունը ոչ համապատասխան գլխադասային հանձնաժողովի, ոչ էլ կառավարության դրական վերաբերմունքին չէր արժանացել: Այդպիսի նախաձեռնության համար այժմ ռեսուրսներ չկան, բյուջեն սուղ է, չնայած նախաձեռնությամբ միջին աշխատավարձի 60 տոկոս նվազագույն աշխատավարձ էր սահմանվում, ինչն, ըստ Ա. Մինասյանի, պահանջելու է մոտ 34 մլրդ դրամ ընդամենը: Որոշակի հաշվարկներ անելով՝ Մինասյանը նշեց, որ իրենց առաջարկով «նվազագույն ամսական աշխատավարձը չի կարող պակաս լինել 63 հազար դրամից, իսկ քաղծառայողների համար՝ 75.800 դրամից»:

Մի խոսքով, չնայած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանի կոչս արձագանքին եւ ՀՅԴ նախաձեռնությունը ընտրությունների նախաշեմին ընտրողներին դուր գալու ձեռնարկ անվանելուն՝ «Ժառանգության» եւ ՀՅԴ պատգամավորներն իրենց ելույթներում մի բոլ սիրտ հովացրին, թե՝ այսպես ու այսպես, «գործադիր իշխանություն իրականացնող գավառական բդեշխներ», կառավարության անպատասխանատվություն, հակասոցիալական քաղաքականություն վարող ԱԺ սոցիալական հարցերի հանձնաժողով, որը պետք է հակակշռեր կառավարությանը, մինչդեռ նրա քաղաքականությունն է իրականացնում եւ այլն: Պարզ է, որ այս նախաձեռնությունն արդեն իսկ դատապարտված է, եւ մնում է նախաձեռնության հասարակությանն ուղղված ուղերձը, որը ԱԺ քննարկման երեւույթն ուներ:

Դալլաֆյանի ռումբը

Երեկ ԱԺ պատգամավոր Վիկտոր Դալլաֆյանը շախմատն ու քաղաքականությունը զուգահեռելով՝ ԱԺ հայտարարությունների ժամին բացատրեց, թե ինչ է կատարվում հայոց ներքաղաքական դաշտում. «Առաջնորդներին արգելված է միմյանց անմիջականորեն շախ կամ մատ հայտարարել, ուստի արքաները իրար դեմ մարտնչում են միջնորդավորված՝ բանակների միջոցով, արքային կապիտուլացնելու նպատակով հակառակորդը նախեւառաջ կազմալուծում է նրա բանակը, շարքից հանում մյուս ֆիգուրները, իսկ պարտիան ավարտվում է, երբ չեզոքացնում են թագավորին: Ուստի ֆիգուրների գոյության երաշխավորն արքան է, որի անվտանգության համար էլ պայքարում են մյուսները՝ երկուստեք գիտակցելով, որ չկա առաջնորդ առանց բանակի եւ չկա բանակ առանց առաջնորդի», խոսք էր հասկացնում Դալլաֆյանը եւ մանրամասն, բայց առանց անունները տալու, նշում գլխավոր խաղացողների քայլերը. ափսոս՝ լրագրային տարածքում ամբողջը փոխանցել հնարավոր չէ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Լեզվի պետական տեսչությունը կարող է եւ ոչ միայն հորդորել

Երբ լինում է խախտում, լինում է նաեւ պատիժ կամ տույժ, հետեւաբար՝ նաեւ տուգանք եւ այն գանձող տեսուչ: Մեզանում սա վերաբերում է գրեթե բոլոր ոլորտներին, բացի լեզվի պետական տեսչությունից: Հենց այս կապակցությամբ երեկ ասուլիս հրավիրած լեզվի պետական տեսչության պետ **Սերգո Երիցյանը** տարակուսանք հայտնեց. «Օրինակ՝ պետավտոտեսուչը բացահայտ խախտման համար կարող է տուգանել վարորդին, հեծիտնին, մեկին, մյուսին... Մենք հարց ենք տալիս՝ ինչո՞ւ ակնհայտ խախտումների դեպքում մեր կազմակերպության տեսուչը չի կարող տուգանել»: Երիցյանը ընդգծեց, որ եթե օրենսդրական լուրջ բացթողումները վերացվեն, ապա լեզվի պետական տեսչությունը ավելի լավ կիրականացնի իր գործունեությունը: Այս կապակցությամբ տեսչությունը շրջանառության մեջ է դրել լեզվական քաղաքականության, լեզվական կանոնակարգման, լեզվական վերահսկողության եւ լեզվի պետական տեսչության մասին օրինագիծը, ըստ որի տեսչության աշխատակիցները իրավունք կունենան վարչական վարույթ հարուցել: Երիցյանը այս օրինագծի ներկայացումը հիմնավորեց հանգամանքով, որ «մեր տեսչությունը միակն է, որ տարիների ընթացքում չունի օրենք իր մասին»:

Չնայած մայրաքաղաքի փողոցներում շարունակում են մնալ ու առաջանալ օտարահունչ ու օտարատառ անուններով օբյեկտներ, Սերգո Երիցյանը վստահություն հայտնեց, որ միայն այս տարի նման 75 տնտեսվարող սուբյեկտ է տուգանվել: Երիցյանի խոստովանությամբ՝ «Երբեմն դժվար է լինում գտնել կազմակերպության սեփականատիրոջը, երբեմն առհասարակ անհնար է լինում դիմել վերջինիս, էլ ուր մնաց տուգանել, կամ բերել օրենքի դաշտ»: Լեզվի պետական տեսչությունը իրավասու է միեւնույն տնտեսվարողի մոտ տեսչական ստուգումներ իրականացնել տարին միայն մեկ անգամ, եթե անգամ տեսչությունը տուգանք սահմանի տնտեսվարողի վրա, ապա վերջինս վճարելուց հետո հանգիստ կարող է շարունակել կանգնել օրենքի խախտումը՝ առնվազն մեկ տարի «հանգիստ մնալով»:

Հեռուստատեսությամբ ցուցադրվող գովազդային տեսահոլովակների ոլորտում, Երիցյանի խոսքերով, տեսչությունը որեւէ իրավասություն չունի, կարող է միայն «հորդորել չօգտագործել ոչ հայերեն կամ օտարահունչ բառեր»:

Այս կապակցությամբ ասուլիսի երկրորդ բանախոս, գրականագետ, լեզվաբան **Արտեմ Հարությունյանը**, դիմելով Երիցյանին, ասաց. «Հորդորելը նույնն է, ինչ երեխային ասես՝ շոկոլադն այնտեղ է, բայց չհամարձակվես վերցնել, հորդորում եմ քեզ: 20 տարի լեզվի տեսչությունը ինչ-որ՞ս է թույլ տվել, որ հեռուստառադիոն, որ մտնում է ընտանիքներ, չունի հսկողություն, չունենա ազգային ինքնավստահություն: Հեռուստատեսությունն այն չեզոք գոտին է, որ չի կարելի ծառայեցնել փողոցային գռեհին, քանի որ հեռուստատեսությունը պետական լեզվի ամենամեծ ծառայողն է: Լեզուն կարիք ունի ձեր պաշտպանությանը: Առաջարկում եմ, որ լեզվին նվիրված հեռուստատեսային ժամ լինի», ասաց պրոֆեսորը: Իսկ օտարահունչ անվանումով օբյեկտների մասին խոսելիս Արտեմ Հարությունյանը հիշեց իր տան հարեւանությամբ գտնվող գիշերային ակումբներից՝ «Օմեգա»-ն: «Արդեն կորցրել եմ ըղձանքներիս ամբողջ քանակը, որովհետեւ ներքեւի դղրդոցը բթացնում է գրողներին», ասաց Հարությունյանը՝ նկատելով. «Դա համահոչակ է, որն ավելի հայտնի է, քան մեր ինստիտուտը»:

Այժմ պրոֆեսորը միջոց է գտել աղմուկից խուսափելու. «Ականջախցուկ եմ գտել եւ գիշերները հանգիստ քնում կամ աշխատում եմ», նշեց Հարությունյանը:

Ուսանողներից «դիպլոմի փող» են հավաքել, հետո ասել՝ «դիպլոմ չկա»

Թեոդոս «Գալիք» համալսարանի «կառավարում» ֆակուլտետի 51 ուսանողներ վճարել են մեկ կիսամյակի ուսման վարձը՝ 184.000 դրամ, «դիպլոմի փողն էլ»՝ 24.000 դրամը, սուսուփուս մուծել են, սակայն դիպլոմ այդպես էլ չեն ստացել: Պատճառն այն է, որ մեկ տարի առաջ համալսարանում ստուգումներ են անցկացվել, խախտումներ հայտնաբերվել, եւ կառավարությունը կասեցրել է «կառավարում »ֆակուլտետի լիցենզիան:

Լիցենզիան կասեցվել է, սակայն բուհի ղեկավարությունն այդ մասին ուսանողներին հարկ չի համարել տեղյակ պահել: Ուսանողները միայն ավարտական քննություններին են տեղեկացել, որ դիպլոմ չեն ստանալու:

«Գալիք» համալսարանի աշխատակազմի ներկայացուցիչ **Գեւորգ Հարությունյանը** երեկ հայտարարեց, որ համալսարանը դատի է տվել ԿԳ նախարարությանը: Նրանք ներկայիս իրավիճակի մեղավոր համարում են միայն նախարարությանը, որն «իրեն մատնել է անգործության»: «Պատրաստվում ենք դատական կարգով հարցը վիճարկել, որովհետեւ բուհն իր մեղավորությունը չի տեսնում: Ուսանողների անհանգստությունը նաեւ բուհի անհանգստությունն է: Մենք շահագրգիռ ենք ուսանողներին դիպլոմ տալ»: Հարությունյանի մեկնաբանությամբ՝ օրենքով լիցենզիան կասեցվում է որոշակի ժամկետով, որից հետո բուհը կարող է խախտումների վերացման մասին հիմնավոր փաստաթղթեր ներկայացնել նախարարությանն ու հնգօրյա ժամկետում կրկին լիցենզիա ստանալ:

Նրա մեկնաբանությամբ՝ «Գալիք» համալսարանը շարունակում է գործունեությունն օրինականության շրջանակում:

Երեկ «Գալիք» համալսարանի ուսանողները «Հենարան» ակումբ էին եկել անդորրագրերով՝ հավաստիացնելով, որ իրենք դիպլոմ ստանալու համար նույնիսկ 24.000 դրամ են վճարել, սակայն նրանց պատասխանել են՝ դիպլոմ չկա: Ի դեպ բուհի ղեկավարությունն ուսանողներից պահանջել է, որ ուսումը պարտադիր շարունակեն համալսարանի մագիստրատուրայում: Ասուլիսի ընթացքում միայն օրենքից խոսող Հարությունյանը չկարողացավ բացատրել, թե որ օրենքով են նրանք ուսանողներից դիպլոմի դիմաց գումար պահանջել, եթե իմացել են, որ չեն կարողանալու դիպլոմ տալ:

Երեկ երեկոյան ստացանք նաեւ նախարարության պատասխանը: «Ազգ»-ին ուղարկված հաղորդագրությամբ նախարարությունը շեշտում է, որ համալսարանը կասեցված մասնագիտությունների գծով կազմակերպել է անօրինական կրթական գործընթաց եւ ոտնահարել ուսանողների իրավունքները: Նախարարությունից տեղեկացրել են, որ պատրաստական են աջակցելու «Գալիք» համալսարանի 51 ուսանողի՝ կրթությունը շարունակելու այլ համալսարանում եւ ստանալու դիպլոմ: ԿԳՆ-ն նաեւ ուսումնական հաստատությունների հետ կքննարկի ուսանողների ուսման վարձի որոշակի զեղչեր կիրառելու հնարավորությունները:

Վերոնշյալ պատմությունը որքան ցավալի, նույնչափ զավեշտալի է: Պարզվում է՝ ուսանողությունը ոչ միայն թերթ չի կարդում, այլեւ չի հետեւում լրատվական թողարկումներին: Երբ «կառավարում» ֆակուլտետի լիցենզիան կասեցվեց՝ լրատվական բոլոր միջոցները, այդ թվում՝ մեր թերթը, գրեցին այդ մասին, խնդրի կապակցությամբ եղույթ ունեցավ նաեւ նախարարը, բայց մեր ուսանողները, պարզվում է, ոչնչից տեղյակ չեն: Նրանցից մի քանիսը ինչ-որ բան են լսել, բայց նրանց էլ ներքին կարգով հավաստիացրել են, «թե բա ինչ են անելու, կտան դիպլոմ, բա ոնց», նրանք էլ շարունակել են հայտնի կենդանու ականջում քնած մնալ եւ շարունակել իրենց «ուսումը»:

Հ. Հ.

Նորընտիր քաղաքաղետ. Աբովյան փողոցի կրպակները կաղամոնտաժվեն

Երեւան քաղաքի ավագանու միաձայն ընտրությամբ մայրաքաղաքի 54-րդ քաղաքաղետ ընտրվեց Տարոն Մարգարյանը: Ընտրություններին չմասնակցեց ավագանու երեք անդամ՝ ներառյալ նախկին քաղաքաղետ Գագիկ Բեգլարյանը: «Ցանկանում եմ Երեւանը տեսնել զարգացած, եւ այդ զարգացումը պետք է լինի համաչափ», այսպես շնորհակալություն հայտնեց ավագանու անդամներին **Տարոն Մարգարյանը** վստահության համար:

Կադրային լուրջ փոփոխություններ մայրաքաղաքի ղեկավար կազմում չեն լինի: «Կադրային քաղաքականությունն ինքնանպատակ չի լինում, եւ երբ մենք սենսացիա ենք սարքում, դրան համաձայն չեմ»: Մարգարյանի գնահատմամբ՝ քաղաքաղետարանում աշխատում է պրոֆեսիոնալ թիմ, անհրաժեշտ է թիմին ոգեւորել, որպեսզի շարունակվեն մեկնարկած ծրագրերը;

Նորընտիր քաղաքաղետը խոստովանեց, որ վերջին անգամ հասարակական տրանսպորտով երթեւեկել է պատանեկության տարիներին: Անգամ այն ժամանակ, երբ նախկին քաղաքաղետ Կարեն Կարապետյանը հանձնարարել էր, որ քաղաքաղետարանի աշխատակիցները հասարակական տրանսպորտով երթեւեկեն, խնդիրները լավ հասկանալու եւ ներկայացնելու համար, Մարգարյանը սեփական մեքենայով է երթեւեկել:

«Կարեն Կարապետյանի որքա էլ հասարակական տրանսպորտով չեմ երթեւեկել», ասաց նա՝ հավաստիացնելով, որ զբաղվելու է մայրաքաղաքի տրանսպորտի հարցերով: Մարգարյանը տեղեկացրեց, որ կրպակների աղամոնտաժումը շարունակվելու է: «Գործընթացն ավարտական փուլում է: Մեր գործող կրպակներին չենք անդրադառնալու, բացառությամբ Աբովյան փողոցի: Տեղի կրպակների սեփականատերերի հետ բանակցությունների միջոցով փորձելու ենք մայթերը տրամադրել քաղաքացիներին»:

Քաղաքաղետն անդրադարձավ նաեւ «Հրազդան» մարզադաշտի տարհանման գոտում առեւտրի կենտրոնի կառուցմանը: «Դա քաղաքաշինական ծրագիր է, որը պետք է ինքնարկվի քաղաքաշինական խորհրդում: Պետք է հանրային լսումներ հրավիրվեն, որից հետո խորհուրդը կուսումնասիրի խնդրի դրական եւ բացասական կողմերն, ու որոշում կկայացվի», ընդգծեց քաղաքաղետը:

Հիշեցնենք, որ բազմաթիվ ճարտարապետներ ահազանգել են եւ մտահոգություն ներկայացրել, որ մարզադաշտի տարհանման գոտում առեւտրի կենտրոնի կառուցումը անթույլատրելի է՝ մարդկանց անվտանգության տեսակետից: Հիշեցնենք, որ նախկին քաղաքաղետ Կարեն Կարապետյանը ստորագրել է առեւտրի կենտրոնի կառուցման թույլտվությունը: Մարզադաշտի եւ տարհանման գոտում կառուցվելիք եռահարկ առեւտրի կենտրոնի սեփականատերը ՀՀ Աժ պատգամավոր Ա. Հովհաննիսյանն է:

Նորաստեղծ հանձնաժողովը կքննի զորամասերում տեղի ունեցած արտակարգ պատահարները

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորությամբ երեկ նախարարությունում տեղի է ունեցել զինված ուժերի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերանայման եւ առաջարկությունների մշակման համար ստեղծված աշխատանքային խմբի առաջին նիստը: Աշխատանքային խմբի գործունեությունը համակարգում է փոխնախարար Արա Նազարյանը՝ նպատակն է պաշտպանության ոլորտի օրենսդրական բարեփոխումներն արդյունավետ իրականացնելու համար շահագրգիռ եւ կայուն ուժեր համախմբել: Խմբում կընդգրկվեն նաեւ ՀՀ զինդատախազության, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի եւ քաղաքացիական հասարակության շահագրգիռ ներկայացուցիչներ: Հանձնաժողովի անդամները քննարկելու են զորամասերում տեղի ունեցած դեպքերն ու արտակարգ պատահարները, անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի վրա ազդող կարգապահական եւ իրավական խախտումները, դրանց նպաստող պայմաններն ու պատճառները, դեպքերի ու արտակարգ պատահարների աճի կամ նվազման միտումներն ու օրինաչափությունները, ինչպես նաեւ կոռուպցիոն ռիսկի նվազեցման ուղիները:

Նախարար Օհանյանի ներկայացմամբ՝ խմբի գործունեությունն ուղղված է զինված ուժերի գործունեությունը կարգավորող կամ ոլորտին առնչվող այլ իրավական ակտերի վերանայմանը, իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների մշակմանն ու զինված ուժերում հանցավորության մակարդակի բարձրացմանը նպաստող գործոնների հայտնաբերման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացմանն ու դրանց վերացմանը:

Հ. Հ.

Տարաբնույթ

Արտահանումը տնտեսության լոկոմոտիվն է

Մեր տնտեսության աղագան արտահանմանն ուղղված տնտեսական մոդելն է: Այս թեզը, առաջին հայացքից, անվիճելի է, սակայն կարող ենք ցնդել, որ այսօր արտահանման խրախուսմանն ուղղված քայլերը այնքան էլ արդյունավետ չեն: Դրա մասին են վկայում արտաքին առեւտրի հաշվեկշռի վերաբերյալ տվյալները: 2011 թ. առաջին 9 ամիսներին Հայաստանում ներմուծման ծավալները կազմել են 2 մլրդ 979,5 մլն դոլար, իսկ արտահանմանը՝ 969,7 մլն դոլար: Արտահանման ծավալները զիջում են ներմուծմանը ավելի քան 3 անգամ: Փոքր ներքին շուկա ունեցող երկրի համար արտահանման խրախուսումը կրկնակի կարեւոր է: Մտահոգիչ է նաեւ, որ մեր արտահանման կառուցվածքում շատ մեծ է հանքահումքային արտադրանքի դերը: Իսկ արդյոք կա՞ն ռեսուրսներ արդյունաբերության մյուս ճյուղերում:

Գոհունակությամբ պետք է նշենք, որ կան: Բերենք մեկ օրինակ: Հայրենական արտադրության առաջատարներից մեկի՝ «Գրանդ Հոլդինգի» փորձը վերը նշվածի ապացույցն է: 2011 թվականի տվյալներով, առ այսօր «Գրանդ Հոլդինգի» կազմի մեջ մտնող «Գրանդ Տոբակո» եւ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ընկերությունները արտահանել են մոտ 15 մլն 122 հազ դոլարին համարժեք պատրաստի արտադրանք (160 կոնտեյներ ծավալ): 2010 թվականին այս ընկերությունները արտահանել էին մոտ 6 մլն 475 հազ. դոլարին համարժեք պատրաստի արտադրանք: Տարին դեռ չի ավարտվել եւ արտահանման ծավալները դեռ կարող են աճել: Անցյալ ողջ տարվա համեմատությամբ, այս տարվա 9 ամիսների ընթացքում արտահանման ծավալները աճել են 2,5 անգամ: Հաշվի առնենք, որ Հայաստանը իր 2 հարեւանների կողմից շրջափակման մեջ է, իսկ մյուս երկու հարեւանները, որպես տարանցիկ ուղիներ, այնքան էլ կայուն չեն: Տարանցման խնդիրները ավելի են բարդացնում հայրենական արտահանողի գործը, բարձրացնելով արտադրանքի ինքնարժեքը: Չնայած այս օբյեկտիվ բարդություններին, հայրենական արտադրողը կարողանում է էապես մեծացնել արտահանման ծավալները: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը իր բացասական հետեւանքներն է թողել մեր տնտեսության վրա, սակայն

«Գրանդ Հոլդինգը» կարողացել է պահպանել եւ էլ ավելի հզորացնել իր դիրքերը, ոչ միայն ներքին, այլեւ արտաքին շուկայում: «Գրանդ Հոլդինգը» կարողացել է իր դիրքերը պահպանել նաեւ հարկային պարտավորությունների գծով: ՀՀ ՊԵԿ-ի կողմից հրապարակված 1000 խոշոր հարկատուների ցուցակում ընդգրկված են «Գրանդ հոլդինգի» կազմի մեջ մտնող 13 ձեռնարկություն: Շատերն էլ ընդգրկված չեն այդ ցուցակում: «Գրանդ Հոլդինգի» կազմի մեջ մտնող բոլոր ընկերությունները միասին բյուջե են վճարել ավելի քան 9 մլրդ 800 մլն դրամ եւ ցուցակում այս ցուցանիշով պահպանել են 5-րդ պատվավոր տեղը: Հատկանշական է, որ արտահանվող սիգարետի արտադրության մեջ հիմնականում օգտագործվում է հայ գյուղացու կողմից արտադրվող ծխախոտահումքը: 2011 թ. ընթացքում «Գրանդ Հոլդինգի» կողմից մթերվել է ավելի քան 11 հազ. տոննա ծխախոտի կանաչ զանգված, 2010 թ. 8 հազ տոննայի փոխարեն: «Գրանդ Հոլդինգի» կազմի մեջ մտնող ձեռնարկությունները, ծխախոտագործության շնորհիվ, տասնյակ հազարավոր աշխատատեղեր են ստեղծում Հայաստանի եւ Արցախի գյուղատնտեսության մեջ: Այսօր «Գրանդ Հոլդինգը» ստեղծել է նաեւ ավելի քան 6 հազ. աշխատատեղ միայն մայրաքաղաքում: Արձանագրենք, որ գործազրկության կրճատման եւ մեծամասնակ աշխատատեղերի ստեղծման ամենաարդյունավետ ճանապարհը հայրենական խոշոր արդյունաբերության խթանումն է: «Գրանդ Հոլդինգը» դրա ակնհայտ վկայությունն է: Իսկ արտահանման ծավալների աճի դեպքում աշխատատեղերի թիվը կարող է էլ ավելի մեծանալ:

Մնում է ցավով արձանագրել միայն, որ «Գրանդ հոլդինգի» նման ձեռնարկությունների թիվը այսօր Հայաստանում այնքան էլ մեծ չէ: Ամեն դեպքում, արտահանումը պետք է խրախուսել բոլոր հնարավոր միջոցներով: Խոսքը, իհարկե, պատրաստի արտադրանք արտահանող ձեռնարկությունների մասին է: Օրինակ՝ պետությունը կարող էր, որպես բարյական խրախուսում, հրապարակել արտահանման ոլորտում աճ արձանագրած ձեռնարկությունների լավագույն տասնյակը եւ պատվոգրերով գնահատեր նրանց կատարած գործը: Սրանով հասարակությունը եւ պետությունը ցույց կտային, որ գնահատում են արտահանողին եւ մրցակցային մթնոլորտ կստեղծեին արտահանողների միջեւ:

ՄԱՐԳԻՍ ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

Լքված հեքիաթների կիրճի նկարիչը

Շուշիում հարգված նկարիչ եւ պատկերասրահի տնօրեն **Հովիկ Գասպարյանը** մշակութային քաղաք դարձնելու հեռանկարին այսպես նայեց. «Կա ծրագիր, ասում են: Լրատվամիջոցներից էլ այդ մասին լսելով՝ մարդիկ գալիս են, որ Շուշի պատմական քաղաքը տեսնեն: Սկսել են գալ տուրիստները: Փոխանակ մի պատմական փողոց վերականգնեն, կան հարուստ մարդիկ, որ լսել են՝ տուրիստ է գալիս, սկսել են ճոխ հյուրանոց սարքել, փոխանակ քաղաքը սարքեն: Տուրիստն էլ, մեկ-երկուս, կգա, կտեսնի չսարքած քաղաք, բան չկա անելու, էլ չի գա, հո՞ չի գալու մենակ հյուրանոցում նստի ու մնա»:

Ի՞նչ է պետք, որ անցյալի մշակութային կոլորիտի մի տասը տոկոսը գոնե երեւա, հարցնում ենք Հ. Գասպարյանին. «Պիտի մարդ սիրի այդ երկիրը: Որ սիրում է՝ քայլերն ինքնըստինքյան գալիս են: Շուշիի անանցանելի փողոցները բոլոր փողոցների քսան տոկոսն են: Շուշիի գենոլան (գլխավոր հատակագիծ-Մ.Խ) են գծում՝ Երեւանում են գծում, արտասահմանում են գծում, առանց Շուշին իմանալու ո՞նց կարելի է նրա գենոլանը գծել: Առաջինը՝ Շուշին պետք է մաքրվի ավերակներից, ամուր հիմքերը մնան, նոր իմանաս՝ ի՞նչ ես կառուցելու: Մերոնք ինչ են անում՝ ասածի կեսն են անում: Ասենք, ասում են՝ էս շենքը պիտի քանդվի ու նորը կառուցվի: Ու ասածի կեսն, իրոք, անում են, միայն քանդում են, սարքում են ժամանակակից շենքերը, որ ոչ մի պատմական արժեք չունեն: Անպայման նախ պատմական շենք պետք է վերականգնեն: Մարիամյան օրիորդաց վարժարանն էն ձեւ են վերականգնում, որ գնում տեսնում ես՝ ասում ես, լավն էն է չսարքեն, ճարտարապետական առումով անգրագիտություններ են կատարվում: Հին մայթերը Շուշիում շատ մեծ քարով տաշած ու շարած էին, մաքվածությունն էլ հնայք էր տալիս. էդ է, չէ՞, Շուշիի կոլորիտը: Քանդել-տարել, բերել են բետոնից պլիտեք ու ասֆալտ: Նույնը օրիորդաց վարժարանի մայթերի մոտ է՝ բերել են հողը լցրել, ահագին էլ ճանապարհը բարձրացրել են, քանի որ շենքը նախատեսված է մի նախնական հարթությունից՝ կամարներ ունի: Ճանապարհը որ բարձրացնում ես, կամարները կտրում

ես, այսինքն՝ շենքն իր հզորությունը կորցնում է: Էդ մայթի քարերից սարքած սալահատակը քանդում, բերում-հողը լցնում են, վրայից ասֆալտ են անում: Անտարբերությունից, երկիրը չսիրելուց է: Ով պետք է սիրի՞. բոլորը, հասարակ բանվորից մինչեւ պրեզիդենտ», ասում է Հ. Գասպարյանը:

Դուք ինքներդ ինչ-որ բան նախաձեռնում ե՞ք, մշակույթի ներկայացուցիչ եք, հարցնում եմ. «Դա հիմա չի կարելի, որովհետեւ դա նշանակում է բողոք, հենց մի բան ասում ես, նշանակում է՝ բողոքում ես»:

Փոխանցեցինք մեկշաբաթյա մեր տպավորությունը Շուշիից. ժողովուրդը ոնց որ մի կողմի վրա լինի, ղեկավարները՝ մի կողմի, շուշեցիք ոնց որ մեծ փլավից մի երկու գդալով կողքից տանողներ, բայց հիմնական փլավն ուրիշինն է, շուշեցին իրեն կարծես այնքան էլ շուշեցի չի զգում. «Միգուցե, բայց ես այդպիսի բան չեմ զգում»: Ի՞նչ կփոխի Շուշի մշակույթի նախարարության տեղափոխումը. այս հարցին ի պատասխան նկարիչը կատակեց հայտնի կենդանու եւ նրա փալանի մասին ժողովրդական խոսքով, բայց եւ լրջանալով ասաց. «Ե՛վ չի փոխվում, ե՛ւ փոխվում է: Նախարարությունը Շուշի գալով կզսվի՝ Ստեփանակերտում աղրողների էն մասից ազատվելով, որոնք մշակույթի նախարարությունում աշխատելով ուղղակի աշխատանք են գտել, զուտ աշխատավարձի համար են աշխատում, նրանք երեւի Շուշի չեն գա: Իսկ էն իսկական աշխատողը, արվեստը սիրող-գնահատողը գալու է, սա դրական է: Բացի դրանից՝ Շուշիում կգան կաղրեն՝ աղրողն է ծաղկեցնում:

Իսկ որ Շուշիում այլեւս բնակֆոնդ չկա ցանկացողներին տալու՝ դրան նկարիչը թեթեւ է նայում.«Մի բան ճիշտ է կատարվել, միգուցե տեսել են, ընթացքը սխալ է, էդպես են դարձրել: Օրինակ՝ ես մեկը, որ Շուշիում է միշտ աղրել, տանս դիմաց մի փոքրիկ հողամաս ունեմ, էդքանը: Ու տեսել եմ, որ հարուստ մարդիկ դրսից գալիս, տարածքներ են առնում, մեկնեն դնում ու գնում են՝ տարածքը իր սեփականությունն է: Էդքան տարածքն էդ մարդն ի՞նչ է անում՝ կամաց-կամաց ծախում է: Իսկ Շուշիում մարդիկ աղրում են, գոնե էդ տարածքը նրանց տուր, որ աղրողը հույս ունենա, որ ինչ-որ հարստություն ունի: Եթե էդ արտասահմանցին ուզում է տուն սարքի, կգա էդ մարդուց կառնի, մեկ է, էդ մարդը ի վիճակի չէ իր տունը նորոգի-սարքի, վերջն իր համար նվազագույնն է թողնելու, իսկ մնացածը ծախելու է, գոնե ֆոնդ կլինի էդ մարդու համար: Քաղաքաշինարանը, վարչակազմը որոշեցին ու սկսեցին տեղի բնակիչներին որոշ հողեր սեփականացնելու իրավունք տալ: Հիմա ուզում ես գաս ապրես, արի, ու պետք չէ բողոքել, որ ավելի վաղ էկածները ձրի են վերցրել. պատերազմից հետո տները դատարկ էին՝ գայիք ապրեիք, դժվար էր, չէ՞: Հիմա ուզող-բողոքողները հետքի են գնում: Գային պահեին՝ էդ տները չքանդվեին: Մարդիկ են եղել՝ սկզբից եկել, ձրի տունը ստացել են, հետո ծախել, գնացել Երեւան: Այսինքն՝ պետությանը խաբել է էդ մարդը»:

Շուշիի մշակույթը նրա պատմական-ճարտարապետական նկարագիրն է: Ամեն մի պատը մշակույթ է՝ եթե վերականգնվի, սա մշակույթ է: Չգիտեմ էս եվրոպական շերտը որտեղի՞ց է եկել: Մեր նախապապերը հրաշալի քաղաք են սարքել՝ նույն սպիտակ քար ու ավազով, ոչ թե բնությանը խեղճացրել են, այլ բնությանն ավելի են հզորացրել, բնական շարունակություններ են:

Որ այս բոլորը խոսում ե՞ք պաշտոնյաները լսո՞ւմ են. «Լսելը՝ լսում են, հո լսողությունից թույլ չե՞ն (ծիծաղում է), հարգանք կա արվեստագետների նկատմամբ»:

Մի խոսքով՝ Հ. Գասպարյանը իրեն կտրված չի զգում աշխարհից. «Չէ, աշխարհի կենտրոնն է Շուշին», ու գյումեցիների մի հին անեկդոտը պատմեց, որ երբ Ամերիկայից եկած հային գյումրեցին հարցնում է, թե որտե՞ղ է նրա աղրած տեղը: Վերջինս բացատրում է, որ մի ամբողջ օր ինքնաթիռով գնալ Գյումրիից, ասում է՝«Էդ խուլ տեղն ի՞նչխ կաղրիք». «Սա ինձ համար աշխարհի կենտրոնն է: Անկախության քանամյակին, օրինակ, այստեղ Շահեն Խաչատրյանն էր, քանամյակի ցուցահանդես պիտի լիներ՝ շատ նկարիչներ նկարներ են նվիրել այդ նպատակի համար: Քսանամյակի ցուցահանդեսին այդ նկարների քան տոկոսն էր ցուցադրված, մնացածը դեռ մնում է: Եկավ նա այդ ցուցահանդեսին, իր շնորհավորական խոսքը ասաց ու մնաց մեր տանը, ու այդպես առիթից առիթ գալիս է: Ու ոչ միայն նա՝ շատերն են գալիս, երեւանցի նկարիչներ, իջնում ենք Հյունոդը»: Հյունոդը, բացատրեց, «Լքված հեքիաթների կիրճն է» (սա Հյունոդում կամ, որ ավելի ճիշտ է, Հոնուսում նկարչի ստեղծած շարքի անունն է: Հոն բառից է՝ Ղարաբաղի բարբառով, հյուն, հոնուս, մի խոսքով, Հյունոդ գյուղ կա Հյունոդի կիրճում): Դա Շուշիի ձորն է փաստորեն, մի անկրկնելի վայր, որտեղ իջնում էր Գասպարյանը բնաղատկերներ նկարելու. «Գեղեցկությունն այնքան հարուստ է, խիտ ու ճոխ, որ ուղեղս չէր հասցնում ընկալել ու նկարել, ու միշտ անբավարար հետ էի դառնում: Գնացի մի շաբաթով մնացի, ու սովորություն դարձավ, ամառները վրան էի տանում, մնում, անգամ տուն էլ մի փոքրիկ սարքեցի՝ փայտով-բանով»: Հովիկ Գասպարյանն իր սիրելի Հյունոդ է տանում նաեւ երեւանցի նկարիչներին. «Այնպիսի գեղեցկություն է, որ չես կարողանում լավ արտացոլել, ուրիշներին էլ պատմել, ուզում ես գոռաս. նկարեցի շարք՝ բնությունը, ավերակ գյուղերը, ալրաղացները... Հիմա, փառք Աստծո, Հյունոդը բնության պահպանվող օբյեկտների մեջ է՝ փակ գոտի»:

Ուրիշ շուշեցի նկարիչների մասին հարցրինք. «Ես լավ աշակերտներ ունեմ՝ Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար ֆոլեջում եմ դասավանդում: Շուշիում չորս լավ նկարիչ կա՝ Դանիել Ղազարյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Կարենը, երկու իմ աշակերտները, որ հիմա Արցախի նկարիչների միության անդամ են, ու... ես (Հ. Գասպարյանը Հայաստանի նկարիչների միության անդամ է):

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ

Օրինագիծն օրենք կդառնա՞...

Ադրբեջանի Միլլի մեջլիսը երեկ երրորդ ընթերցմամբ ընդունել է «Նախկին նախագահի ապահովության մասին» սահմանադրական օրենքը: Կողմ է քվեարկել 110, դեմ՝ 1 պատգամավոր: Զարմանալի է, սակայն, որ խորհրդարանի խոսնակ Ասադովի ասելով՝ «վեց ամիս հետո օրինագիծը երրորդ ընթերցմամբ կդրվի կրկնակի քվեարկության»: Թե ի՞նչն է դրա պատճառը, մնում է գուշակել:

Օրինագիծը վերաբերում է «Ադրբեջանի բոլոր նախկին նախագահներին»: Մինչ այդ որոշ պատգամավորներ հարց էին հարուցել, որ օրենքը տարածվի միայն «անկախ Ադրբեջանի նախագահների վրա»: Թիրախ էր ընտրվել Այազ Մութալիբովը, որ «կոմունիստական Ադր. ԽՍՀ-ի նախագահն է եղել»: Այդ արգելքը, սակայն, երրորդ ընթերցմամբ նախաքվեարկված օրինագծում տեղ չի գտել:

Ադրբեջանի նախկին նախագահի համար սահմանվում է գործող նախագահի աշխատավարձի կեսի չափ դրամական ապահովություն, որը կկազմի շուրջ 8000 մանաթ: Նրան տրվում են ծառայողական մեքենա, վարորդ եւ ոչ ավելի, քան 3 թիկնապահ: Էքս-նախագահը կօգտվի նաեւ անվճար բուժօգնությունից: Նա կունենա նաեւ գործող նախագահի աշխատավարձի 20 տոկոսի չափով ներկայացուցչական ծախսեր անելու հնարավորություն: Նախկին նախագահին եւ կնոջը (ամուսնուն) ցմահ կտրվի դիվանագիտական անձնագիր: Օրինագիծը նաեւ անձեռնմխելիությամբ է օժտում էքս-նախագահին եւ նրա կնոջը (ամուսնուն): Նրանք կարող են քրեական հետապնդման ենթարկվել գլխավոր դատախազի կողմից միայն հանցագործություն կատարելու պահին:

Այս կետը շատ էական է հատկապես, քանի որ նախկին նախագահ Այազ Մութալիբովը քրեական հետապնդման տակ է: Այսպիսով օրենքը վերջնականապես ընդունվելուց եւ Իլհամ Ալիեւի կողմից՝ վավերացվելուց հետո Մութալիբովի հանդեպ հետապնդումը թերեւս կկասեցվի, եւ նա Ադրբեջան վերադառնալու իրավունք կունենա:

Կարելի է ենթադրել, որ օրինագծի երրորդ ընթերցմամբ կրկնական քվեարկության ընթացակարգը սահմանվել է որոշակի ժամանակ շահելու եւ Մութալիբովի լոյալությունը ստուգելու նպատակով: Որոշ մահվան կաղակցությամբ նա ամռանը Բաքու էր եկել եւ այցելել «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւի շիրմին: Դա ակնհայտորեն քաղաքական ժեստ էր՝ ի պատասխան Իլհամ Ալիեւի «մեծահոգության»: Բայց ինչ-որ խնդիրներ, ամենայն հավանականությամբ, դեռեւս մնում են չպարզաբանված:

Օրինագիծը վեց ամիս հետո կրկնական քվեարկության ներկայացնելու մասին խորհրդարանի խոսնակի ասածը մղում է նաեւ այլ ենթադրության: Բացառված չէ, որ հենց այդքան ժամանակ է պետք, որ Իլհամ Ալիեւը վերջնական վճիռ կայացնի՝ երրորդ ժամկետով առաջադրվելո՞ւ է նախագահի թեկնածու, թե՞ պատշտոնը զիջելու է առաջին տիկնոջը կամ ԱԻ նախարար Հեյդարովին: Եթե ամեն ինչ ընթանա այնպես, որ նա ստիպված լինի առժամանակ թողնել նախագահի պաշտոնը, ապա էքս-նախագահ կդառնա եւ կունենա սահմանադրական օրենքով պաշտպանված լինելու կարիք: Եթե ոչ, ապա շատ հնարավոր է, որ օրինագիծը կրկնական քվեարկության չդրվի, եւ ամեն ինչ մնա այնպես, ինչպես կա:

ՎԱՀԵ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԵՄ-ը խստացրել է հակասիրիական պատժամիջոցները

Եվրոմիությունը խստացրել է պատժամիջոցները Սիրիայի նախագահ Բաշար Ասադի եւ նրա մերձավորների նկատմամբ, հաղորդում է Ֆրանսպրեսը:

ԵՄ արտգործնախարարները Սիրիայի համար անմատչելի են դարձրել Եվրոպայի ներդրումային բանկի հաշիվները, ինչպես նաեւ «սեւ ցուցակի» մեջ են մտցրել եւս 18 բարձրաստիճան սիրիացիների անուններ: Ընդհանուր առմամբ արգելվել է 74 սիրիացի պաշտոնյաների մուտքը եվրոգոտի եւ սառեցվել են նրանց եվրոպական հաշիվները:

Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարներ Ալեն Ժյուպեն եւ Ուիլյամ Հեյգը հայտարարել են, որ նոր պատժամիջոցների պատճառը Ասադի վարչակազմի «համառությունն» է:

ԵՄ արտգործնախարարները նաեւ հավանություն են տվել Արաբական լիգայում Սիրիայի անդամակցությունը կասեցնելու որոշմանը: «Սիրիան» մեկուսացված է, իսկ միջազգային հանրությունը պատրաստ է բանակցել միայն ընդդիմադիր Սիրիայի ազգային խորհրդի հետ», ասվում է հայտարարության մեջ:

ԵՄ-ը բացառել է լիբիական սցենարով Սիրիայում ռազմական միջամտություն իրականացնելու գաղափարը: «ՄԱԿ-ի ԱԽ-ն Սիրիայի վերաբերյալ բանաձեւ չի ընդունել, եւ երկրում իրավիճակն էլ շատ ավելի բարդ է», պարզաբանել է Ուիլյամ Հեյգը:

Ավելի վաղ հակասիրիական պատժամիջոցներ ձեռնարկել էր ԱՄՆ-ը: Ռուսաստանը կոչ է անում դիվանագիտական երկխոսություն սկսել Բաշար Ասադի հետ, իսկ Արաբական լիգայի որոշման կաղակցությամբ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովն ասել է, որ այն «սխալ» է:

Արաբական լիգան, ընդառաջելով ԱՄՆ-ին, կասեցնում է Սիրիայի անդամակցությունը

1-ին էջից

Թուրքական հանրային հեռուստատեսության գլխավորությամբ զանգվածային բոլոր լրատվամիջոցները իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացրել են այդ հարձակումների վրա, նշելով, թե Սիրիայում իշխանությունների հանցավոր թողտվությամբ թուրքական ներկայացուցչությունների առջեւ այրել են Թուրքիայի դրոշը, պատռել Քեմալ Աթաթուրքի պատատները, նույնիսկ կիսանդրին են ջարդել:

Թեեւ հենց թուրքական հանրայինի էկրանից հարձակման թուրք ականատեսները հայտարարեցին, թե իրենք այդպիսի բաներ չեն տեսել, այնուամենայնիվ, Անկարան դեսպանատան եւ հյուպատոսարանների աշխատակիցների ընտանիքներին «կյանքի անվտանգության նկատառումներով» իսկույն տեղափոխեց Թուրքիա, դա համարեց ՄԱԿ-ի օտարերկրյա ներկայացուցչությունների աշխատակիցների անվտանգության ապահովման համաձայնագրի ոտնահարում, որպեսզի միջազգային այս կառույցի համար պատժամիջոցների անհրաժեշտ նախադրյալներ ստեղծի, ապա նա սպառնալով՝ պահանջեց, որ Դամասկոսը պաշտոնապես ներողություն խնդրի Թուրքիայից:

Սպառնալու առումով հատկանշական է վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նախորդ օրվա ելույթը, որի ընթացքում նա, անցնելով դիվանագիտական հաղորդակցության տեսանելի եւ անտեսանելի բոլոր սահմանները, ասում էր. «Ո՞վ Ասադ, դու, որ հազարավոր մարդկանց բանտարկել ես, պարտավոր ես գնել եւ պատժել նրանց, ովքեր այրել են Թուրքիայի դրոշը: Պատմության մեջ թուրքական դրոշին երկարած ձեռքը միշտ հակահարված է ստացել, էլի կստանա: Մենք չենք կարող ճակատագրի դեմ հանդիման թողնել Սիրիայի ժողովրդին: Սիրիայի վարչակարգը անդունդի եզրին է: Թող Ասադը տեսնի, թե ի՞նչ ճակատագրի են արժանանում սեփական ժողովրդի դեմ բռնություն կիրառողները»:

Ի դեպ, Սիրիայի արտգործնախարար Վալիդ ալ Մուալլիմը ներկայացուցչությունները հարձակման ենթարկված երկրներից՝ Քաթարից, Սաուդյան Արաբիայից, Ֆրանսիայից եւ Թուրքիայից, ներողություն խնդրել է, բայց մամուլի ասուլիսում, այսինքն՝ թերթերի միջոցով, հետեւաբար ոչ պաշտոնական: Մինչդեռ Անկարան պաշտոնական ներողություն է պահանջում, ինչպես պահանջել է Իսրայելից, Գերմանիայից, Հայաստանից եւ Ֆրանսիայից:

Սիրիան Թուրքիայի այս պահանջը կկատարի այնքանով, որքանով կատարել են նշված երկրները: Խնդիրը, սակայն, Դամասկոսի պաշտոնական ներողությունը չէ, այլ Աֆղանստանի ու Իրաքի տխուր փորձություններից հետո որեւէ թիրախի նկատմամբ այլ երկրների միջոցով գործելու Վաշինգտոնի որդեգրած նոր դիրքորոշումը, որը Լիբիայի դեմ գործեց ՆԱՏՕ-ի միջոցով: Թուրքիան, սպառնալով նախագահ Ասադի վարչակարգին, ակնհայտորեն ընդառաջում է Վաշինգտոնին:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա նա էլ, Սիրիայի արտգործնախարարի դիպուկ արտահայտությամբ, Արաբական լիգայի «ոչ պաշտոնական» անդամն է: Հետեւաբար պետք է որ ուղղորդի համաարաբական այս կառույցը, հավատարիմ երկրների միջոցով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ ունեն Քաթարն ու Մոսսադի վերահսկողության տակ գտնվող Հորդանանը: Թերեւս այդ առումով պատահական չէին Սիրիայի անդամակցությունն Արաբական լիգային կասեցնելու Քաթարի առաջարկն ու Հորդանանի թագավոր Աբդալլայի՝ իշխանությունից հրաժարվելու կոչը նախագահ Բաշար Ասադին:

ՀՈՒՍԱԽԱԲՈՒԹՅՈՒՆ

Կոսովոյի հազարավոր սերբեր ՌԴ քաղաքացիություն են խնդրում

«Հին Սերբիա» միության ներկայացուցիչ Զլատիբոր Զորջեւիչը սերբական լրատվամիջոցներին հայտնել է, որ Կոսովոյում ապրող հազարավոր սերբեր դիմել են ՌԴ քաղաքացիություն ստանալու խնդրանքով:

Կոսովոյի ալբանական իշխանությունները 2008-ի փետրվարի 17-ին ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի մի շարք երկրների աջակցությամբ տարածքը միակողմանիորեն անկախացրին Սերբիայից: Բելգրադը եւ Կոսովոյի սերբերը չճանաչեցին ինքնակոչ պետությանը: Սերբական համայնքը ներկայումս կազմում է Կոսովոյի 2-միլիոնանոց բնակչության 5-10 տոկոսը:

Բեսա գործակալությունը մեջբերում է Զորջեւիչի այն խոսքերը, որ Բելգրադում ՌԴ դեսպանությունը ստացել է ՌԴ քաղաքացիություն ստանալու 21733 խնդրագիր: Երկու ամիս առաջ ստորագրահավաք է սկսվել ՌԴ քաղաքացիության շնորհմանը վերաբերող հանրագրի համար:

Սերբերը ակնկալում են, որ ՌԴ արտգործնախարարության միջոցով խնդրագրերը կփոխանցվեն Պետդումային:

Զորջեւիչի խոսքերով՝ ՌԴ քաղաքացիություն հայցողների թիվը կարող է զգալիորեն աճել: ՌԴ քաղաքացիության կարող են հավակնել ոչ միայն 1998-1999 թթ. հակամարտությունից հետո Կոսովոն լքած, այլեւ 1945-ից հետո երկրամասից հեռացած սերբերը:

Կոսովոյի սերբերը Ռուսաստանից ակնկալում են պաշտպանություն, որ չեն կարող ապահովել Սերբիայի իշխանությունները: «Մենք բոլոր հնարավոր միջոցներով փորձել ենք պաշտպանություն ստանալ մեր պետությունից, բայց նա մեզ ուղարկում է մեկ ուրիշ պետություն, որ մենք չենք ճանաչում», հայտարարել է Զորջեւիչը ՌԻԱ գործակալության թղթակցին:

Իսրայելական նոր թռչող սարքը կարող է հասնել Իրան



Իսրայելական բանակն ավարտել է «Էյթան» անօդաչու թռչող սարքի փորձարկումները: Դա աշխարհում ամենամեծ թռչող սարքն է եւ կարող է առանց լրալցարկման հասնել Սուդան կամ Իրան: Սարքն այսուհետեւ կօգտագործվի օպերատիվ աշխատանքում, հաղորդում է ynet կայքէջը:

«Էթանի» երկարությունը 15 մետր է, թեւերի բացվածքը՝ 26 մետր: Դատելով ըստ ամենայնի, սարքը կարող է կատարել ոչ միայն հետախուզական խնդիրներ, այլեւ հասցնել հրթիռահարվածներ: Սակայն Իսրայելի բանակը հրաժարվում է մեկնաբանություններ անել:

Ոչ պաշտոնական աղբյուրներից հայտնի է, որ «Էյթանը» կարող է օդում մնալ մինչեւ 36 ժամ եւ գործել մինչեւ 13 կմ բարձրության վրա, ինչը նրան գրեթե անորսալի է դարձնում C-300 հրթիռների համար:

Երեկ «**Ազգը**» գրեց Թեհրանից մոտավորապես 45 կմ հարավ-արեւմուտք գտնվող «Ամիր ալ Մոմենին» ռազմակայանում տեղի ունեցած պայթյունի եւ Իրանի հրթիռային ծրագրի պատասխանատու, գեներալ Հասան Թեհրանի Մոկադդամի զոհվելու մասին: Որոշ լրատվամիջոցներ հաղորդում են «պայթյուններ» մասին: Համացանցում հայտնվել են միջադեպի զանազան վարկածներ: Պաշտոնական Թեհրանը հայտարարում է, որ տեղի է ունեցել «վթար»: Արաբական եւ արեւմտյան լրատվամիջոցներում արված ենթադրությունների համաձայն, պայթյունը «Մոսսադի» հավաքագրած եւ վարժեցրած սունի գրոհայինների դիվերսիայի հետեւանքն է: Սակայն ականատեսները պատմում են երկու պայթյունի մասին: Առաջինի դեպքում ասես «ռումբ ընկավ վերեւից» (երկրորդը հրթիռի պայթյունն էր): Ականատեսների ցուցմունքները հիմք ընդունելով՝ որոշ մեկնաբաններ ենթադրում են, թե իրանական ռազմակայանին ճշգրիտ հրթիռահարված է հասցրել ամերիկյան կամ իսրայելական որեւէ թռչող սարք:

ՕՊԵՐԱ

«25 տարին՝ մի ակնթարթ»

Խոսովանում է Հասմիկ Պապյանը՝ հոբելյանական Անուշ ընծայելով

Թեպետ այսօր մարդկային առաքինությունների մասին շեշտադրումն այնքան էլ ճիշտ չի լինի, բայց սիրելի եմ բարձրաձայնել՝ նրա ներսի ամուր շաղախն է պայմանավորել ասվածային շնորհ-ձայնն իր ներսի եկեղեցում այնպես բնակեցնել, որ խաղաղ ու ներդաշնակ մնան մեծ բեմերի Դիվան ու պարզ մարդը: Օրեցօր պակասող, հազվադեպ հանդիպող այդ տեսակն է, որ ստեղծագործական հաջողությունների անսայթաք վերելքի ճանապարհին միշտ մնացել է հասանելի, ընդգծված քաղաքացիական կեցվածքով, անթաքույց մեծ սիրով առ Հայաստան: Չափսոսալ իհարկե չի կարելի, որ Սպենդիարյանի անվան ազգային օպերային թատրոնը անցած 20 տարիներին չօգտագործեց բոլոր հնարավորությունները՝ նրա վառ մեկնաբանություններն առավել հասու դարձնելու հայ հանդիսատեսին, ում հանդեպ կարոտը երբեք չի թաքցրել մեր թերթին տված տարբեր տարիների իր հարցազրույցներում: Հասմիկ Պապյանի բարձրաշխարհիկ կեցվածքը եզրեր չունի ոչ գլամուրի, ոչ ժամանցիկ հաճույքների, ոչ էլ իրեն գովազդելու «աստղային» հիվանդության հետ: Երևի այդ է պատճառը, որ նրա համերգները առանձնապես չեն գովազդվում այնպես, ինչպես մեր ականջը սովորեցրել են մեր հայրենի ռադիո-հեռուստաընկերությունները, երբ նրանց ակումբային որեւէ երգիչ փող է վճարում դրա համար: Այդպիսի լռություն էր օգոստոսին, երբ Արցախում տեղի կամերայինի հետ բացառիկ համերգ ունեցավ: Այդպիսի անտարբերություն է նաեւ հիմա, երբ հայտնի է, նոյեմբերի 16-ին Սպենդիարյանի անվան ազգային օպերային թատրոնի բեմում Անուշ է երգելու՝ ստեղծագործական 25-ամյա «հաշվետվություն» ներկայացնելով:

«25 տարին մի ակնթարթ էր, բայց նաեւ՝ բավականին երկար ժամանակ: Հիմա հետ նայելու, արժեւորելու, ամփոփելու, ինչու չէ՝ նաեւ սահմաններ դնելու ժամանակն է՝ ինչ պիտի անեմ սրանից հետո, ինչպես պիտի շարունակեմ իմ գործունեությունը:

Անուշը արմատներին վերադառնալու մեծ առիթ է ինձ համար, դրսում չեմ կարող երգել, ուրեմն՝ հայրենի բեմում կկատարեմ: Այսինքն՝ վերադառնում եմ այնտեղ, որտեղից սկսել եմ: Անուշը հայ ժողովրդի ամենասիրված, ամենափայփայած օպերան է, այն երգել են բազմաթիվ երգչուհիներ: Սա ինձ համար մարտահրավեր չէ, որովհետեւ այդ քննությունը բռնել եմ արդեն 1988-ին, երգել եմ բազմիցս: Այս անգամ կարոտս հագեցնելու առիթ է, իմ հանդիսատեսին հանդիպելու, այդ սիրելի բեմում քայլելու, օդը շնչելու, երգելու հնարավորություն: Վերադարձ իմ տուն», ասում է Հասմիկ Պապյանը:

Հեռուստատեսությունը մեզ ընտելացրել է օպերային բեմում գահաթոռին բազմած իրենց վաստակը, տարեդարձը նշող գործիչների տեսնել: Այսօր այդպես չէ: Լրագրությունը իրադարձային, մշակութային վերնագրի տակ կամփոփի Հասմիկի այսօրվա Անուշը, իրականում՝ սա մեծ վերանայում է:

Կանդրադառնանք:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Մանկական Եվրոտեսիլ-2011»

Երեկ «Անի պլազա» հյուրանոցում տեղի ունեցավ «Մանկական Եվրոտեսիլ-2011»-ին նվիրված մամուլի ասուլիս, որի շրջանակում ներկայացրին մանրամասներ մրցույթի վերաբերյալ: Այն հարցին, թե ովքեր են լինելու մրցույթի հանդիսավարները «Մանկական Եվրոտեսիլ»-ի կազմկոմիտեի մամուլի ղեկավար Արսակ Վարդանյանն ասաց, որ վարելու են **Գոհար Գասպարյանը** եւ **Ավետ Բարսեղյանը** եւ հավելեց, որ Հայաստանում առաջին անգամ լինելու է հրավառություն-ներկայացում, որը ձեռք է բերվել մեծ ջանքերի շնորհիվ:

Մրցույթին իր աջակցությունն է ցուցաբերում «World Vision» սոցիալական կազմակերպությունը: Բանախոսներն ասացին, որ որպես հասուկ հյուր մրցույթին իրենց կատարումներով հանդես կգան Սիրուշոն եւ «Մանկական Եվրոտեսիլ-2010»-ի հաղթող Վլադիմիր Արզումանյանը, իսկ ինչ վերաբերում է գլխավոր հյուրին, որը կլինի արտերկրից, բանախոսները չցանկացան բացել չակերտները:

Անդրադառնալով տոմսերին, նշենք դեկտեմբերի 2-ին կայանալիք գլխավոր փորձի տոմսերն արժեն 2000-12.000 դրամ, իսկ դեկտեմբերի 3-ի համերգի տոմսերն արժեն 5000-50.000 դրամ: Նշենք, որ արդեն սպառվել են բոլոր մատչելի տոմսերը: Ինչո՞վ է տարբերվում դեկտեմբերի 2-ի համերգը դեկտեմբերի 3-ից, Մանկական Եվրոտեսիլի հայաստանյան պատվիրակության ղեկավար Գոհար Գասպարյանը պատասխանեց. «Դեկտեմբերի 2-ին տեղի է ունենալու նույն համերգը, որը տեղի կունենա դեսեմբերի 3-ին: Տարբերությունը նրանում է, որ դեկտեմբերի 2-ին չի հրապարակվի մրցույթի հաղթողի անունը: Դա հնարավորություն է ընձեռում, որպեսզի ավելի շատ հանդիսական կարողանա ներկա գտնվել մրցույթին»:

Կ. Դեմիրճյանի անվ. մարզահամերգային համալիրի բեմն արդեն կառուցվում է եւ այն լինելու է բավական մեծ չափերի, հետաքրքրական լուսային, ձայնային էֆեկտներով, նշենք որ կազմակերպչական աշխատանքներում ներգրավված են արտասահմանյան մասնագետներ:

Երեկ Գեղարվեստի պետական ակադեմիայում տեղի ունեցավ ցուցահանդես, որը նվիրված էր «Մանկական Եվրոտեսիլ-2011»-ին: Ցուցահանդեսին ներկայացված էին հետաքրքրական լուծումներով գունեղ նկարներ:

«Ազգի» հետ իր տպավորություններով կիսվեց «Մանկական Եվրոտեսիլի» հայաստանյան պատվիրակության ղեկավար Գոհար Գասպարյանը. «Այս ցուցահանդեսը մեզ համար մեծ անակնկալ է, քանի որ նրանք այս ամենն արել են առանց մեր աջակցության, անշահախնդրորեն: Ցանկալի կլիներ, որ նրանք նման նախաձեռնությամբ հանդես գային ավելի շուտ, երբ մենք հայտարարել էինք լոգոյի մրցույթ: Գովելի է եւ շատ շնորհակալ ենք ուսանողներին՝ հանձին իրենց ղեկավարի, որ նման անակնկալ մատուցեցին մեզ: Ես հիանում եմ եկող սերնդի մտածողությամբ եւ հուսով եմ, որ երիտասարդները դուրս կգան միջազգային ասպարեզ»:

«Ազգը» զրուցեց նաեւ ցուցահանդեսի հեղինակներից մեկի հետ, որն ասաց. «Քանի որ այս տարի «Մանկական Եվրոտեսիլ»-ը պետք է տեղի ունենար Հայաստանում, մենք խմբի ղեկավարի հորդորով որոշեցինք ցուցահանդես կազմակերպել: Ոգեւորությունը շատ մեծ է եւ սա մեծ նշանակություն ունի մեզ համար: Ի տարբերություն մեր մյուս ցուցահանդեսների, սա առանձնանում է իր մասշտաբով: Ըստ իս՝ ցուցահանդեսն ստացվել է»:

ՍԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

«Հայոց եկեղեցու պատմություն» դասագիրքը՝ բալյան տարբերակով

Նոյեմբերի 14-ը կոյրերի միջազգային օրն էր: Այդ առիթով Երեւանի տեսողության խանգարում ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոցում կայացել է միջոցառում, որի ընթացքում ներկայացվել է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի 5-րդ դասարանի դասագրքի բալյան տարբերակը: Այդ յուրօրինակ դասագրքի ստեղծման, հրատարակման ծրագիրը իրականացնում է Հայաստանի Աստվածաշնչյան ընկերությունը: Իսկ նախաձեռնողներն են Գարեգին Բ կաթողիկոսի օրհնությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի մնացյալ դասարանների դասագրքերի հրատարակությունը բալյան տարբերակով:

Մ. Մ.

The Beautified Project-ը Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում

Նոյեմբերի 13-ին, կիրակնօրյա պատարագից հետո Հայ առաքելական Սուրբ եկեղեցու վիրահայոց թեմին կից Թբիլիսիի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում հայկական տեսաֆիլմ դիտելու եկած եկեղեցասեր հասարակայնությանը սպասում էր հաճելի անակնկալ. Գալուստ Գյուլբենկյան սրահում նրանց դիմավորեց The Beautified Project ռոք-երաժշտական խումբը, տեղեկացնում է «Հայարտուն» մշակութային բաժնի վարիչ Լեւոն Չիդիլյանը:

Անդրե Սիմոնյան, Արմեն Շահվերդյան եւ Առլեն Շահվերդյան երկվորյակ եղբայրների կազմով այս երաժշտական խումբը նախորդ օրը Թբիլիսիի «Մագթի» ակումբում հանդես էր եկել փայլուն մենահամերգով:

Խումբը 2005 թվականին Լոնդոնում հիմնադրել է Անդրե Սիմոնյանը եւ առաջին հայկական խումբն է, ում տեսահոլովակները ցուցադրվել են MTV հեռուստացանցի եվրոպական ալիքներով: Խումբը երկու ալբոմների հեղինակ է: Ռոք-խմբի ալբոմները մեծ հաջողությամբ ընդունվեցին նաեւ Հայաստանում:

Մ. Մ.

«Հայ գրքի տունը» Մոսկվայում կբացվի դեկտեմբերի կեսերին

«Ազգն» արդեն տեղեկացրել էր, որ Մոսկվայում բացվելու է «Հայ գրքի տուն»: Այժմ տեղեկացանք, որ Մոսկվայի Բասմաննայա 19 հասցեում (Սադովի կոլցոյի շրջակայքում) դեկտեմբերի կեսին կսկսի գործել «Հայ գրքի տունը»: Այն համարժեք է լինելու Երեւանում Մաշտոցի պողոտայում բացված «Ռուսական գրքի տանը»: Երկու գրքի տները սերտ կհամագործակցեն, որով էլ լայն թափ կստանա հայ-ռուսական բարեկամությանը եւ կծառայեն նաեւ որպես հասարակական ու մշակութային կենտրոններ:

Հունվարից ՌԴ-ի մայրաքաղաքում ադրոնները հնարավորություն կունենան այդ կենտրոնում հաճախել հայոց լեզվի ուսուցման դասընթացներին: Կենտրոնում մշտապես կթարմացվի ամսագրերի ու թերթերի օրինակները՝ հնարավորություն ստեղծելով մոտիկից ծանոթանալու մշակութային իրադարձություններին, «Ազգին» տեղեկացնում է ԱՊՀ-ի երիտասարդական միության հասարակական գործիչ Անդրանիկ Նիկողոսյանը:

Մ. Մ.

Արմավիրի մարզում սպասում էին ասմունքի փառատոնի ժյուրիին

Հանրապետական ասմունքի մանկապատանեկան 4-րդ մրցույթ-փառատոնի ժյուրին հյուրընկալվեց Արմավիրի մարզի Հոկտեմբերյան քաղաքի թիվ 1 մշակույթի տանը: Հոկտեմբերյանի մշակույթի պալատում տոնական տրամադրություն էր տիրում: Փառատոնի ժյուրիին, որի կազմում էին բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը, բան. գիտ. թեկ. Չարենցի անվ. գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը, ՀՀ վաստակավոր արտիստ, ասմունքի վարպետ Սարգիս Նաջարյանը, դերասանուհի Ջուլիետա Բաբայանը, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկ. Փառանձեմ Մեյթիխանյանը, բանաստեղծուհի Անահիտ Հարությունյանը եւ փառատոնի պատասխանատու, նախագծի հեղինակ Մարիետա Մակարյանը:

ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ անցկացվող ասմունքի փառատոնի Արմավիրի մարզի եզրափակիչ փուլին մասնակցում էին մարզի 132 դպրոցներից 1-ին փուլին մասնակցած շուրջ 3860 աշակերտներից ընտրված լավագույն 40-ը՝ երկու տարիքային խմբերում: Մինչ ժյուրին կամփոփեր եզրափակիչի արդյունքները, լեփ-լեցուն դահլիճի առջեւ ելույթ ունեցավ Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի առաջատար դերասանուհի Ջուլիետա Բաբայանը եւ ներկաներին հիացրեց իր ասմունքով:

Եզրափակիչում հաղթող ճանաչված 6 ասմունքողներ կմրցեն հանրապետական եզրափակիչ փուլում: Փառատոնը կարեւորեց ու արեւմտահայ պոեզիային ծանոթացնելու հնարավորություն ընձեռելու նախաձեռնությունը ողջունեց տիկին Մեյթիխանյանը, որը նաեւ 7-րդ դասարանի Հայոց լեզու դասագրքի հեղինակն է: Հաղթողներին շնորհավորում էին ու մաղթում, որ մարզի պատիվը բարձր պահեն եզրափակիչում եւ նախորդ փառատոնների պես ունենան հաղթող ասմունքող:

Առաջիկայում փառատոնի ժյուրին կհյուրընկալվի Սյունիքի մարզում եւ Արցախում:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

Մանրանկարչական ցուցահանդես

Նոյեմբերի 15-ին՝ ժամը 18.00-ին Club ակումբ-ցուցասրահում (Թումանյան 40) տեղի ունեցավ մանրանկարիչ Սերգեյ Օկոեւի «Մանրանկարչության արվեստը» անհատական ցուցահանդեսի բացումը: Սերգեյ Օկոեւը, լինելով մասնագիտությամբ բժիշկ, արդեն-իսկ 20 տարուց ավել զբաղվում է մանրանկարչությամբ: Բազմիցս ունեցել է ցուցահանդեսներ ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներում: Վերջին ցուցահանդեսը կայացել է 2008-2009-ին Մատենադարանում, որտեղ ներկայացվել է 15-րդ դարի դուխս դե Բերիի Ֆրանսիական մանրանկարչության գլուխգործոցի միակ կրկնօրինակը աշխարհում:

Ներկայումս ցուցահանդեսում վերին նշված ձեռագրի որոշ էջերը Հայաստանում ներկայացվում են վերջին անգամ: Նաեւ ներկայացվելու են «Իմ Հայաստանը» նկարաշարը, ինչպես նաեւ «Հիշողություն Ֆրանսիայից» մանրանկարները:

Ուղեգրի նվաճման խնդիրն ավելի բարդացավ

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականն ավարտեց ելույթներն այս մրցաշրջանում: Եվրո-2013-ի ընտրական մրցաշարի հերթական խաղում հայ ֆուտբոլիստները երեկ հյուրընկալելով Ուելսի հավաքականին, այդպես էլ չգտան մրցակցի դարպասի բանալին:

Եղանակային անբարենպաստ պայմաններում անցած հանդիպումը դիտարժան չստացվեց: Հատկապես առաջին խաղակեսում ֆուտբոլիստները գործում էին շատ դանդաղ, չկար կոմբինացիոն խաղ, գրոհներն էլ պարզունակ էին ու իրենց մեջ առանձնակի վտանգ չէին պարունակում: Բացի այդ էլ մեր ֆուտբոլիստները գրոհում էին փոքր ուժերով: Նման պայմաններում դժվար էր մրցակցի դարպասին սպառնալից պահեր ստեղծելը, մանավանդ որ հյուրերը մեծ ուժերով էին պաշտպանվում:

Ուելսի հավաքականը խաղում էր տիպիկ բրիտանական ոճով: Մի քանի անգամ հյուրերը փորձեցին բարձից փոխանցումներով սպառնալ մեր դարպասին, սակայն ոչինչ չստացվեց:

Ընդմիջումից հետո խաղն ավելի աշխույժ բնույթ ստացավ, դաշտի տերերը սկսեցին ավելի մեծ ուժերով գրոհել: Սակայն կրկին գործը վճռորոշ հարվածի չէր հասնում: Առջևի գծում մեր հավաքականի խաղն այդպես էլ չստացվեց: Իսկ ահա հյուրերը 75-րդ րոպեին գոլային իրական պահ ստեղծեցին: Բարեբախտաբար, հիանալի խաղաց դարպասապահ Արսեն Պետրոսյանը, այլապես Հայաստանի հավաքականը խաղադաշտից կհեռանար պարտված:

Արդեն 2-րդ հանդիպումն է, որ մեր ֆուտբոլիստները չեն կարողանում գոլ խփել, ինչը մտահոգիչ է: Սեփական հարկի տակ անցկացրած 2 խաղում մեր ընտրանին ընդամենը մեկ միավոր վաստակեց ու ավելի դժվարացրեց եզրափակիչի ուղեգիր նվաճելու իր խնդիրը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Չեխիա	4	3	1	0	12-1	10
2. Չեռնոգորիա	5	3	0	2	13-6	9
3. Հայաստան	5	2	2	1	6-4	8
4. Ուելս	5	2	1	2	3-4	7
5. Անդորրա	5	0	0	5	0-19	0

ՀՀ առաջնությունում լեգեոնական դարպասապահներ այլևս հանդես չեն գա

Վերջին տարիներին ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականում խիստ հրատապ է դարձել դարպասապահ Ռոման Բերեզովսկուն արժանի փոխարինող գտնելու հարցը: Բանն այն է, որ Հայաստանի առաջնության մասնակից թիմերից շատերը դարպասի պաշտպանությունը վստահում են արտերկրից հրավիրված դարպասապահների, որի պատճառով տեղացի կադրերը հնարավորություն չեն ունենում աճելու: Վերցնենք թեկուզ ավարտված առաջնությունը: Երկրի չեմպիոն «Ուլիսում» մրցաշրջանի ողջ ծանրաբեռնվածությունն իր ուսերին կրեց ռուսաստանցի Վլադիմիր Մալկովը՝ հուսալիորեն պաշտպանելով թիմի դարպասը: Նույնը վերաբերում է նաև «Գանձասարի» վրացի դարպասապահ Լեւան Բուբուտեիշվիլուն: «Շիրակում» դարպասապահը բելառուս Իգոր Լոգվինովն է, իսկ «Բանանցում» առաջնության 2-րդ կեսում հանդես եկավ Դոնեցկի «Մետալուրգից» հրավիրված Դմիտրի Նեպոգոդովը: «Արարատում» էլ սկզբում հանդես էին գալիս լեգեոնական դարպասապահներ:

Այս ամենի հետևանքով մեր մի խումբ դարպասապահներ զրկված լինելով խաղալու հնարավորությունից, ստիպված էին լքել Հայաստանը:

Եվ ահա ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ՀՖՖ գործկոմը որոշել է հաջորդ տարվանից արգելել Հայաստանի առաջնություններում լեգեոնական դարպասապահների հայտավորումը (ի դեպ, նման արգելք գործում է մասնավորապես Իրանի բարձրագույն խմբի առաջնությունում): Կարծում ենք, որ այս որոշումը կնպաստի Հայաստանում տեղացի դարպասապահների պատրաստմանը, ինչպես նաև կստիպի արտերկրում հանդես եկող հայ դարպասապահներին վերադառնալ հայրենիք ու խաղալ հայկական ակումբներում:

Պակյաոն պատրաստ է նոր մենամարտի Մարկեսի հետ

Ֆիլիպինցի Մենի Պակյաոն պահպանեց կիսամիջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը՝ Լաս Վեգասում կայացած մենամարտում հաղթելով թեթևքաշային կարգում WBA-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոն, մեքսիկացի Խուան Մանուել Մարկեսին: Դա անվանի երկու բոքսամարտիկների 3-րդ մենամարտն էր: Եվ ինչպես նախորդ երկու մենամարտերում, այս անգամ էլ մրցավարների վճիռը դժգոհության տեղիք տվեց: Նրանցից երկուսը հաղթանակը շնորհել էին Պակյաոյին (115-113, 116-112), իսկ 3-րդը գրանցել էր ոչ-ոքի (114-114): Թեև պարտությանը, Մարկեսը պահպանեց թեթևքաշային կարգում չեմպիոնական իր գոտիները:

Այդ մենամարտը Պակյաոյի համար 59-րդն էր պրոֆեսիոնալ ռինգում: Նա տոնեց իր 54-րդ հաղթանակը: 2 մենամարտում գրանցվել է ոչ-ոքի, 3-ում Պակյաոն պարտվել է: Մարկեսը 60-րդ մենամարտն անցկացրեց՝ կրելով 6-րդ պարտությունը: 53 մենամարտ նա շահել է, մեկն ավարտել է ոչ-ոքի:

«Բոլորի համար էլ պարզ է, որ շահել եմ մենամարտը: Մարկեսը լավ բոքսամարտիկ է, մի քանի անգամ նրան հաջողվեց ինձ հարվածել: Սակայն ես զգույշ էի, քանի որ նա սպասում էր իմ գրոհներին», մենամարտից հետո նշել է Մենի Պակյաոն:

Top Rank պրոմոութերական ընկերության ղեկավար Բոբ Արումը հայտարարել է, որ պատրաստ է մրցակիցների 4-րդ մենամարտը կազմակերպել: Մենի Պակյաոն հայտարարել է, որ պատրաստ է 4-րդ անգամ մենամարտել Մարկեսի հետ: Վերջինս էլ դեմ չէ կրկին ռինգ դուրս գալու, թեև մտածում է նաև պրոֆեսիոնալ բոքսամարտիկի 18-ամյա կարիերայի ավարտի մասին:

Պետրա Կվիտովան տարվա լավագույն թենիսիստուհին է

Չեխ Պետրա Կվիտովան հարցման արդյունքներով ճանաչվել է 2011-ի լավագույն թենիսիստուհի: Ընթացիկ մրցաշրջանում 21-ամյա Պետրան 6 մրցաշարի հաղթող է ճանաչվել, այդ թվում առաջին մրցանակի է արժանացել Ուիմբլդոնում եւ Սամբուլում կայացած աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունում: Նա նաեւ իր զգալի ներդրումն ունեցավ Չեխիայի հավաքականի հաղթանակում, որը պարտության մատնելով ռուսներին, նվաճեց ֆեդերացիայի գավաթը: Նա նաեւ 32 տեղով առաջադիմել է թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման ցուցակում:

«Ընթացիկ մրցաշրջանը դարձավ երազանքների իրականացման տարի: Ինձ համար մեծ պատիվ է ճանաչվել տարվա լավագույն թենիսիստուհի եւ ընդգրկվել աշխարհի ուժեղագույն թենիսիստուհիների շարքը, որոնք երբեւէ կորոց են դուրս եկել, որոնց թվում է նաեւ Մարտինա Նավրատիլովան: Մշտապես կհիշեմ այս մրցաշրջանը եւ հույս ունեմ, որ ձեռքբերածով չեմ բավարարվի», նշել է Պետրա Կվիտովան:

ՇԱԽՄԱՏ

Ոչ-ոքի առաջին պարտիայում

Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում մեկնարկեց շախմատի կանանց աշխարհի չեմպիոնուհու տիտղոսի եզրափակիչ մրցախաղը: Աշխարհի ներկայիս չեմպիոնուհի, չինացի շախմատիստուհի Հոու Յիֆանի եւ շախմատային թագի հավակնորդուհի, հնդիկ գրոսմայստեր Համպի Կոներուի մրցախաղի առաջին պարտիան երկարատեւ պայքարից հետո ավարտվեց ոչ-ոքի:

Մրցակցուհիները 10 պարտիայից բաղկացած մրցախաղ կանցկացնեն: Հավասար արդյունքի դեպքում կնշանակվի լրացուցիչ մրցախաղ: Նախ կանցկացվի 4 պարտիայից բաղկացած արագ շախմատի մրցախաղը, ապա հարկ եղած դեպքում աշխարհի նոր չեմպիոնուհին ի հայտ կգա կայծակնային մրցաշարում:

Անդրեասյանը հաշտություն կնքեց

Շախմատի Ռուսաստանի գավաթի քառորդ եզրափակիչի առաջին պարտիայում Զավեն Անդրեասյանը սեւերով 49-րդ քայլին հաշտություն կնքեց Մաքսիմ Մաքլակովի հետ: Այսօր կկայանա մրցակիցների 2-րդ պարտիան: Եթե այն էլ ավարտվի ոչ-ոքի, ապա կիսաեզրափակիչի ուղեգիր կտրվի լրացուցիչ մրցախաղում:

Քառորդ եզրափակիչի մյուս 3 պարտիաներն արդյունավետ ելք ունեցան: Դենիս Խիսմատուլինը հաղթեց Պավել Սմիռնովին, Վադիմ Զվյագինցեւն առավելության հասավ Դմիտրի Բոչարովի նկատմամբ, Իգոր Կովալենկոն էլ պարտության մատնեց Պավել Մալեւինին:

ԲԿՄԱ-ն հետաքրքրվում է Յուրա Մովսիսյանով

Ռուսական լրատվամիջոցների տեղեկացմամբ, Մոսկվայի ԲԿՄԱ-ի ղեկավարությունը հետաքրքրվում է «Կրասնոդարի» եւ ՀՀ ազգային հավաքականի հարձակվող Յուրա Մովսիսյանով: Սովորաբար ԲԿՄԱ-ն թիմ է հրավիրում 25-ից ոչ բարձր տարիքի եւ 8 մլն եվրոյից ոչ բարձր տրանսֆերային արժեք ունեցող ֆուտբոլիստների: Իսկ Յուրա Մովսիսյանը 24 տարեկան է, տրանսֆերային գինն էլ մոտ 5 մլն եվրո է: ԲԿՄԱ-ն Մովսիսյանին դիտարկում է որպես բրազիլացի Վագներ Լավի փոխարինող, որը պատրաստվում է ձմռան տրանսֆերային շրջանում հեռանալ թիմից:

Ինչպես հայտնի է, ընթացիկ մրցաշրջանում Յուրա Մովսիսյանը հանդես եկավ ՌԴ պրեմիեր լիգայի առաջնության մասնակից Կրասնոդարի համանուն թիմում՝ տեղափոխվելով դանիական «Ռանդերսից»: Նա անցկացրած 24 խաղում 7 գոլի հեղինակ դարձավ, գոլային 3 փոխանցում կատարեց: Մովսիսյանն իրեն հիանալի դրսեւորեց նաեւ ՀՀ ազգային հավաքականի ընտրական մրցախաղերում՝ 9 խաղում խփելով 4 գոլ, կատարելով գոլային 6 փոխանցում:

Աբրահամը ռինգ դուրս կգա հունվարի 14-ին

Արթուր Աբրահամի առաջիկա մենամարտը կկայանա հունվարի 14-ին: Մրցակիցն առայժմ հայտնի չէ: Ինչպես տեղեկացրել ենք, Արթուրը հատուկ սննդակարգի շնորհիվ սկսել է աստիճանաբար նվազեցնել քաշը, որպեսզի կրկին հանդես գա միջինքաշային կարգում: Նա մտադիր է միջանկյալ քաշերում մի քանի մենամարտեր անցկացնել, որոնցից առաջինը նշանակված է հունվարի 14-ին: Դրանից հետո հայ բոքսամարտիկը կսկսի ելույթները իր համար հարազատ քաշային կարգում ու կփորձի կրկին նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Անցում աշուն-գարուն մրցակարգի

2013-ից սկսած Հայաստանի ֆուտբոլի առաջնությունն անցկացվելու է աշուն-գարուն մրցակարգով, ինչը վաղուց ընդունված է եվրոպական մի շարք երկրներում: Նշենք, որ հաջորդ մրցաշրջանից այդ մրցակարգով է անցկացվելու նաեւ Ռուսաստանի առաջնությունը:

Նոր մրցակարգին անցնելու առիթով 2012-ի ՀՀ առաջնության անցկացման ժամկետները զգալիորեն աճել են: Առաջնությունը կմեկնարկի 2012-ի մարտին եւ վերջնագիծը կհասի 2013-ի մայիսին: Առաջնությունը կրկին կանցկացվի 8 թիմերի մասնակցությամբ, 4 շրջանով: Պարզապես այս անգամ առաջնությունում դադարներն ավելի շատ կլինեն: Մասնավորապես բացառված չէ, որ Եվրոպայի առաջնության ժամանակ Հայաստանի առաջնությունում ընդմիջում հայտարարվի:

Ինչ վերաբերում է 2013-ի առաջնությանը, ապա նոր մրցակարգով անցկացվելիք մրցաշարը կմեկնարկի օգոստոսին եւ կավարտվի 2014-ի մայիսին: Դժվար է ասել, թե ինչ կտա այս նորամուծությունը հայկական ֆուտբոլին: Նշենք, որ Հայաստանում 2-րդ անգամ են անցնելու աշուն-գարուն մրցակարգին: Նման մրցակարգով անցկացվեց 2 առաջնություն (1995/96, 1996/97-ին), որից հետո կրկին վերադարձան գարուն-աշուն տարբերակին:

Խոշոր պարգեւավճարներ մրցաշրջանի դափնեկիրներին

ՀՖՖ գործկոմը զգալի փոփոխություններ է մտցրել ֆուտբոլային մրցաշրջանի դափնեկիրների պարգեւատրման կարգում: Այսուհետ Հայաստանի չեմպիոն հռչակված թիմը կպարգեւատրվի 10 մլն դրամով, իսկ ՀՀ գավաթակիրը կստանա 6 մլն դրամ:

«Տարվա լավագույն ֆուտբոլիստ» մրցույթի արդյունքներով առաջին երեք տեղերը զբաղեցրած ֆուտբոլիստները կպարգեւատրվեն համապատասխանաբար «ոսկե», «արծաթե» եւ «բրոնզե» խաղակոշիկներով, ինչպես նաեւ կստանան 10, 7 եւ 5 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ինչ խոսք, այս փոփոխությունները զգալի խթան կդառնան ֆուտբոլիստների համար մրցանակների համար մղվող պայքարում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

«Մնամ Եվրոմիությանը սպասելիս»

Երբ քաղաքագետ Զարդուշ Ալիզադեն վերջերս գրեց, որ իր երկիրն «սպասում է քաղբյուրոյի որոշման»՝ նկատի ունենալով պաշտոնական Բաքվի դիվանագիտական անգործությունը, տպավորությունն այն էր, թե դա ընդամենը «սեւ» հումոր է:

Պարզվում է, սակայն, նա իրավիճակը գնահատել էր նույնիսկ չափազանց դիպուկ: Այսինքն, եթե ադրբեջանական կողմն ինչ-որ բան անում է հասնելու ղարաբաղյան կարգավորման, ապա միայն «քաղբյուրո» է փնտրում: Մի «հեղինակավոր ասյան, որտեղ ձայների մեծամասնությամբ կընդունվի իրեն բավարարող վճիռ»:

Ասվածի հերթական վկայություն է Ռասիմ Մուսաբեկովի ծավալուն «վերլուծականը», որ նվիրված է ԵՄ արտաքին քաղաքական հարցերով հանձնակատար Քեթրին Էշթոնի հարավկովկասյան այցին:

Մուսաբեկովի հիմնական պատսպարումն այն է, որ այդ այցով Եվրոմիությունն «ավելի գործուն դերակատարություն կունենա Հարավային Կովկասում»: Բայց նա չի զլացել ենթադրել, որ «ղարաբաղյան կարգավորմանը ԵՄ ներգրավվածությունը, ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանի կողմից չի ողջունվում»:

Ըստ ադրբեջանցի քաղաքագետի՝ «քանի որ ԵՄ-ում լոբբիստական աշխատանքի հնարավորությունները սահմանափակ են»: Ասվածի հակառակ կողմն այն է, որ եթե ԵԱՀԿ-ի ՄԽ-ի համանախագահության ձեւաչափով ԼՂ հարցում «առաջընթաց չի արձանագրվել», պատճառը «Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի հայկական լոբբին է»: Այսինքն, Ռուսաստանում, Միացյալ Նահանգներում եւ Ֆրանսիայում ապրող հայերն են ազդում այդ երկրների կառավարությունների վրա, թույլ չեն տալիս, որ ԼՂ հարցը «լուծվի արդարացիորեն»:

Մուսաբեկովը մոռանում է, որ նույն Ֆրանսիան Եվրոմիության առանցքային երկիր է: Որ ԵՄ-ի այլ երկրներում նույնպես հայեր են ապրում: Որ, ի վերջո, նրանք կարող են նույն հաջողությամբ ազդել նաեւ ԵՄ անդամ պետությունների կառավարությունների վրա: Բայց ամենաէականն այն է, որ Մուսաբեկովն իր պասումները դարձյալ կառուցում է Ադրբեջանի «տնտեսական ներուժի» վրա:

Այո, նա գրում է. «Մենք ինչ-որ բան ունենք առաջարկելու ԵՄ-ին հենց թեկուզ էներգետիկ անվտանգության բնագավառում: ԵՄ-ի առաջ, ի տարբերություն Հայաստանի եւ նույնիսկ Վրաստանի, Ադրբեջանը կանգնում է ոչ թե իբրեւ խնդրող, այլ՝ սոլիդ գործընկեր»:

Նախորդ անգամ մենք ասել էինք, որ Ադրբեջանը փորձում է «երջանկություն կառուցել ուրիշների դժբախտությունների վրա»: Մուսաբեկովի «պասումը» լիովին արդարացնում է մեր եզրահանգումը: Բայց արդարացվա՞ծ է պասել, որ Եվրոմիությունը «խաղաշախտակից մի կողմ կփոշի Վրաստանին եւ Հայաստանին՝ իրենց խնդիրներով» եւ հանուն «էներգետիկ անվտանգության ապահովման կբավարարի Ադրբեջանի հավակնությունները»:

Իհարկե՝ ոչ: Քանի որ ԵՄ-ն Հարավային Կովկասը դիտում է իբրեւ ամբողջություն, միասնական աշխարհաքաղաքական եւ տնտեսական միավոր: Սա է արեւելյան գործընկերության իմաստը: Եվ Քեթրին Էշթոնի այցի աշխարհագրությունն էլ դա է վկայում:

Ինչ վերաբերում է ԵՄ-ի դերակատարության՝ «Ադրբեջանի կողմից ողջունելուն», ապա դա բազմիցս է «ապացուցվել», հատկապես Հարավային Կովկասում ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ Սեմնեբիի՝ Լեռնային Ղարաբաղ այցելելու մտադրության հանդեպ Բաքվի «ընկալունակությամբ»:

Այլ բան է, որ Ադրբեջանը «պասելիքներ ունի»: Բայց դա ավելին չէ, քան ունեցել է Միացյալ Նահանգներից եւ Ռուսաստանից: Եվ կարգավորման գործընթացին ԵՄ-ի ներգրավվածությունն էլ ավելին չի կարող լինել, քան ԵԱՀԿ-ի ՄԽ-ի համանախագահության:

Պետք չէ «կկվի նման բույն փոխել»: Հարկավոր է ազատվել «կկվահոտից»: Այս խորհուրդը կարելի է տալ Իլհամ Ալիեւին:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ամերիկացիների 1/5-ի լսողությունը խաթարված է

12-ից բարձր տարիքի ամերիկացիների մոտավորապես 1/5-ը լսողության խանգարումներ ունի: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով Ջոն Հոպկինսի համալսարանի մի խումբ գիտնականների հետազոտության արդյունքները:

2001-2008 թթ. լսողության ավելի քան 7 հազար սուգումների արդյունքները վերլուծած գիտնականները ընդգծում են, որ իրենց աշխատանքը առաջին անգամ ցույց տվեց լսողության խաթարումների վիճակագրությունն ամբողջ ԱՄՆ-ում:

Ստացված արդյունքների համաձայն, 12-ից բարձր տարիքի 48 մլն ամերիկացի (բնակչության 20,3 տոկոսը) ունի թեկուզ մեկականջի լսողության խախտումներ, իսկ 30 միլիոնը (12,7 տոկոս)՝ երկու ականջի հետ կապված խնդիրներ: Ավելի վաղ կատարված գնահատումների համաձայն, վաս լսող ամերիկացիների թիվը կարող էր կազմել ընդամենը 21-29 միլիոն:

Հետազոտության ընթացքում նաեւ պարզվել է, որ տղամարդիկ կանանցից շատ են ունենում լսողության խախտումներ: Սեւամորթները սպիտակամորթներից փիչ են ենթակա լսողության խաթարումներին: Այդ երեւույթների ստույգ պատճառներն առայժմ չեն հայտնաբերվել:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դասակարգման համաձայն, լսողության խաթարման դեպքում մարդն անկարող է լսել 25 դեցիբելից (ծշուկից) թույլ ձայները: Լսողության խախտումների գլխավոր պատճառներն են վարակիչ հիվանդությունները, վնասվածքները, ուժեղ աղմուկի երկարատեւ ներգործությունը:

ԱՀԿ տվյալներով, աշխարհում լսողության խախտումներից տառապում է մոտ 278 մլն մարդ:

Գողացել են Լինկոլնի հուշահամալիրի պղնձե թուրը

Պղնձագողության մեջ մասնագիտացած գողերը Իլինոյսի նահանգի Սպրինգֆիլդ քաղաքում վնասել են Աբրահամ Լինկոլնի գերեզմանի վրա կառուցված հուշարձանը: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ անհայտ չարագործները պոկել-տարել են ԱՄՆ-ի 16-րդ նախագահի հուշահամալիրը զարդարող արձաններից մեկի պղնձե թուրը:

Կորուստը նկատել է հուշահամալիրի աշխատակիցներից մեկը: Ենթադրվում է, որ թուրը գողացել են 2011-ի սեպտեմբերից մինչեւ նոյեմբեր ընկած ժամանակահատվածում: Նահանգի իշխանությունները մտադիր են մոտ ժամանակներս նորոգել հուշահամալիրը:

Տվյալ նորոգումն անհրաժեշտ է դարձել արդեն երկրորդ անգամ. հարյուր տարի առաջ վանդալները պոկել էին նույն թուրը, որը քաղաքացիական պատերազմի ժամանակների սպայի արձանի ձեռքին է:

Անցյալում հուշահամալիրն ուներ գիշերային պահակ, բայց հետագայում միջոցների խնայողության նպատակով տեղական իշխանությունները կրճատել էին այդ հաստիքը:

Կասեցվել է «ԻՍԿԱ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 226 լիցենզիայի գործողությունը

ԿԲ նախագահի նոյեմբերի 9-ի թիվ 1/1255Ա որոշմամբ կասեցվել է «ԻՍԿԱ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 226 լիցենզիայի գործողությունը մինչեւ 2012 թ. մարտի 26-ը՝ իր դիմումի համաձայն:

Կասեցված ժամանակահատվածում գրավատանը թույլատրված է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնք կապված են մինչեւ կասեցումը ծագած գրավատան պարտավորությունների հետ:

ԿՈՐԵԼ Է

«Ձայնագրությունների «Տերյան» ստուդիա» ՊՓԲԸ-ի

կլոր կնիքը և պետռեգիստրի՝ Սերիա 01Ա N 040254 վկայականը, գրանցման N 286.120.03106: Համարել անվավեր:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ

«Գիսանե» փառատոն

Նոյեմբերի 10-ին Թումանյանի անվան Տիկնիկային թատրոնում մեկնարկեց «Գիսանե» երիտասարդական հանրապետական թատերական փառատոնը, որը անցկացվում է մշակույթի նախարարության, սպորտի -երիտասարդության նախարարության, երիտասարդական հիմնադրամի եւ ԵԹԿՊԻ-ի աջակցությամբ:

Փառատոնի գերխնդիրն է տրամադրել հարթակ երիտասարդ ստեղծագործողներին բացահայտվելու եւ կայանալու համար: Բացմանը ներկա էին եւ իրենց ողջույնի խոսքը ուղղեցին մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը , ԵԹԿՊԻ-ի ռեկտոր Արմեն Մազմանյանը, Փառատոնի տնօրեն Հայկ Ավագյանը, հանձնաժողովի նախագահ Լեւոն Իվանյանը: Բացման արարողության ժամանակ ցուցադրվեց "Գիսանե" փառատոնի նախորդ տարվա հաղթած "Երիտասարդությունը մեկ գիշերով " ներկայացումը: Փառատոնի ընթացքում ներկայացումները կցուցադրվեն Պետական Տիկնիկային , Կամերային երաժշտական , Երեւանի կամերային, ԵԹԿՊԻ-ի ուսանողական, Գոյ, Փոքր եւ Մեծր թատրոններում: Նոյեմբերի 21-ին ԵԹԿՊԻ-ի ուսումնական թատրոնում կկայանա փառատոնի փակումը, որի ժամանակ մասնակիցներին կհանձնվեն լավագույն դերասան /ուհի/, երկրորդ պլանի դերասան /ուհի/, ռեժիսուրա, ներկայացում, երաժշտական ձեւավորում, բեմանկարչություն մրցանակները ժյուրիի անդամներ՝ Լեւոն Իվանյանի, Նազենի Հովհաննիսյանի, Տիգրան Ասատուրովի, Խորեն Լեւոնյանի, Աննա Հեքեքյանի, Ռուբեն Կարապետյանի, Վարդան Մկրտչյանի, Էրիկ Բարսեղյանի, Արա Խզմալյանի որոշմամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հասցեագրված է ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԱՇՁԲ-27 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 14-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԱՇՁԲ-27

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որը գտնվում է f. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել հուշարձանի վերականգնման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղի Գոշավանք համալիրի Մխիթար Գոշի դամբարանի վերականգնման աշխատանքների ձեռքբերումը:

Գնումները ֆինանսավորվելու են ՀՀ 2011 թ. պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին եւ գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետն է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձիք, կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա Պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել f. Երեւան, Կառավարական 3 շենք հասցեով, 7-րդ հարկ, ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ն, եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ f. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ՀՀ մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ

Հեռ. 58 51 78

Կենդանաբանական այգին հայտարարում է բաց դռների միամսյակ

Ամանորյա տոներին ընդառաջ Երեւանի կենդանաբանական այգին երեխաների համար հայտարարում է բաց դռների միամսյակ: Նոյեմբերի 15-ից դեմտեմբերի 15-ը մինչեւ 16 տարեկան այցելուների համար այգու մուտքն անվճար է:

Այգին կոչ է անում բաց չթողնել սիրելի կենդանիներին տարեմուտից առաջ տեսնելու հնարավորությունն ու տեղում պարզել, թե ինչ ուրախ միջոցառումներ է նախատեսել այգին Ամանորին ընդառաջ:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.11.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: